AZG NEW 1.QXD 8/28/2009 10:17 PM Page 1

Ազգ
Azg
29 օգոստոս 2009 շաբաթ 154 (4296)
ISSN: 1829-1651

# Ադրբեջանի երկու նախարար կժամանեն Հայաստան

Ադրբեջանցի ձյուդոյիստների մասնակցությունը Հայաստանում Եվրոպայի երիտասարդական առաջնությանն ապահովելու նպատակով Ադրբեջանի սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Ազադ Ռագիմովը սեպտեմբերի 8-ին կայցելի Հայաստան: Ադրբեջանական «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, ադրբեջանցի նախարարի այցելության ժամանակ նախատեսվում է նաեւ Հայաստանում ադրբեջանցի մարզիկների անվտանգության ապահովման համաձայնագրի ստորագրում:

«Գլխավոր հարցը, որ մեզ հուզում է, Երեւանում մեր մարզիկների անվտանգության ապահովումն է», հայտարարել է Ռագիմովը՝ ավելացնելով, որ ինքն անձամբ կամ իր տեղակալը կայցելեն Երեւան՝ տեղում պայմաններին ծանոթանալու:

Ռագիմովի հետ Հայաստան կայցելի նաեւ Ադրբեջանի ձյուդոյի ֆեդերացիայի նախագահ Ֆիզուլի Ալեկպերովը, որ նաեւ Ադրբեջանի աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարն է:

Ա.Հ.

# ՀԱԿ-ի մեղադրանքները ժամանակավոր հանձնաժողովը կստուգի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Ազգային ժողովի՝ մարտի 1-ի դեպքերը քննող ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքային նիստի օրակարգային երեք հարցերից վերջինը՝ փաստահավաք խմբի նախկին անդամներ Սեդա Սաֆարյանի եւ Անդրանիկ Քոչարյանի՝ ԺՀ-ին ներկայացված զեկույցին էր վերաբերում, բայց այս քննարկման մասին սկզբում պատմենք: Զեկույցը 2008 թվականի դեկտեմբերի 18-ին ՀԱԿ-ի ներկայացրած փաստաթղթին է վերաբերում, որտեղ 5 պաշտոնյայի եւ 4 պատգամավորի մասին տեղեկություն է հայտնվում, թե նրանց (նրանց մարդկանց-Մ.Խ.) ՀՀ պաշտպանության նախարարության թիկունքի ծառայության բաժնից տրամադրվել են զինվորական զգեստներ: (Տես՝ «**Ազգ**»-ի նախորդ համարը) Տեղեկությունն իբր հավաստի աղբյուրից է, բայց անվտանգության առումով տեղեկատվության աղբյուրը չեն բացահայտում: Լրացուցիչ փաստարկ այս փաստաթղթում, ըստ ԺՀ նախագահ **ՍամվելՆիկոյանի**, չկա: Գումարած, որ փաստահավաք խմբի նախկին այս երկու անդամները փորձել են ճշտել տեղեկության իսկությունը եւ ՊՆ պահեստում չեն կարողացել ճշտել. այս փաստաթղթի վերաբերյալ հանձնաժողովականները վերաբերմունք հայտնեցին:






Ըստ ԺՀ անդամ **Գուրգեն Արսենյանի**՝ այդ փաստաթղթի մեջ սարսափելի ներուժ ունեցող վտանգ կա՝ արագ եւ օպերատիվ արձագանքել է պետք, ստուգել, այցելել ՊՆ, որ հասարակության մեջ ճիշտ վերաբերմունք լինի իշխանությունների հանդեպ, քանի որ մինչեւ հիմա հնչած ամենավտանգավոր մեղադրանքն է սա: **Արծվիկ Մինասյանը** հստակեցրեց՝ իշխանությանն անօրինական զինված խմբավորում ստեղծելու ծանր մեղադրանք է ներկայացվում, այս հարցի ստուգման մեջ զեկույցի հեղինակներին եւս պետք է ներգրավել: Ս. Նիկոյանը հիշեցրեց, որ սա ՀԱԿ-ը ներկայացրել էր նաեւ օտարերկրյա դեսպանատներին: Ժամանակը քիչ է, քանի որ ԱԺ աշնանային առաջին նիստում ԺՀ-ի վերջնական զեկույցը պետք է ներկայացվի, ուրեմն եւ արագ պետք է ստուգվի այս աղմկահարույց մեղադրանքը՝ ըստ **Արամ Հարությունյանի**:

ԲՀԿ-ական **Արամ Սաֆարյանն** այս առթիվ հայտարարությամբ հանդես եկավ, թե Գագիկ Ծառուկյանը (ում անունը եւս մեղադրանքում նշվում է-Մ.Խ.) հայկական բանակի հովանավորների եւ աջակիցների շարքում է շատ երկար, նույնիսկ այն ժամանակ, երբ Ա. Քոչարյանը եւ իր հովանավորներն այդ բնագավառում էին աշխատում, եւ նա ու նրա կողմնակիցները կարիք չեն ունեցել որեւէ բան որեւէ պահեստից անվճար ստանալու, սա թող պարզվի. «Ես չգիտեմ՝ ի՞նչ ակնարկ են անում էս թուղթն այստեղ ուղարկողները, մի անգամ եւս ուզում եմ ասել, որ Գ. Ծառուկյանի հետ կապված մարդիկ մարտի 1-ին այդ իրադարձությունների վայրում չեն եղել ու դրա հետ ոչ մի կապ չունեն:

*Տես էջ 2*

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

## Մեկ ամիս՝ մինչեւ Հայաստանի հարցի քննարկում ԵԽԽՎ-ում

*Մինչ այդ պետք է ներկայացվի մարտի 1-2-ի առնչությամբ ԱԺ հանձնաժողովի զեկույցը*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը Ստրասբուրգում կգումարի հերթական նիստը, որի օրակարգի նախագծում առայժմ Հայաստանի հարցն ընդգրկված չէ, թեեւ օրակարգի նախագծում համապատասխան տեղ է հատկացված մեծ կարեւորություն ու շուտափույթ քննարկման կարիք ունեցող հարցերին:**

**Օրակարգի նախագծով, որ տեղադրված է ԵԽԽՎ պաշտոնական կայքէջում, ի թիվս այլ խնդիրների, վեհաժողովը սեպտեմբերի 29-ին կանդրադառնա Վրաստան-Ռուսաստան պատերազմին «մեկ տարի անց» շեշտադրմամբ, կքննարկվեն Մոլդովայում խորհրդարանական ընտրություններից հետո թերացումների առնչությամբ նախորդ նիստում ընդունված 1666 բանաձեւի կատարման առնչությամբ զեկույցները: Իսկ ուրբաթ՝ հոկտեմբերի 2-ին, ԵԽԽՎ-ն այլ հարցերի հետ մեկտեղ կանդրադառնա նաեւ Թուրքիայում փոքրամասնությունների եւ Արեւելյան Հունաստանում մուսուլման փոքրամասնության, կրոնի եւ մարդու այլ իրավունքների հարցերին:**

**Հայաստանի հարցն ինչպիսին քննարկվելու հանգամանքը թերեւս պարզ դառնա ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի հերթական նիստում, որ տեղի կունենա սեպտեմբերի 9-ին Փարիզում: Այդ նիստի օրակարգի նախագիծն արդեն ԵԽԽՎ վերջին՝ 1677 բանաձեւի կատարման առնչությամբ Հայաստանի՝ ԵԽԽՎ-ում պատվիրակության կողմից իրավիճակի ներկայացման կետ է պարունակում:**

*Տես էջ 3*

# Պաշտոնապես հերքում են

***«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ մամուլի գրասենյակ***

**2009-ի օգոստոսի 28-ին մամուլում տեղ են գտել հրապարակումներ, որոնք ներկայացրել են նախկին փաստահավաք խմբի անդամներ Ա. Ք.-ն ու Ս. Ս.-ն առ այն, որ 2008-ի մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների եւ պատգամավորների տրամադրվել է զինվորական հանդերձանք՝ իբր թե այդ օրը մայրաքաղաքում տեղ գտած հրկիզումների եւ թալանի հրահրման նպատակով: Բարձրաստիճան պաշտոնյաների եւ պատգամավորների թվում հիշատակվել է նաեւ Գագիկ Ծառուկյանի անունը:**

**Գագիկ Ծառուկյանի մամուլի գրասենյակը հայտարարում է, որ հրապարակված տեղեկությունները բացարձակապես սուտ են եւ չեն համապատասխանում իրականությանը: Գագիկ Ծառուկյանի մերձավոր շրջապատից որեւէ մեկը որեւէ կերպ մարտի 1-ի դեպքերին ներգրավված չի եղել: Նման կեղծ եւ ստահոդ տեղեկություններ տարածողները փորձում են հասարակության ուշադրությունը շեղել մարտի 1-ի ողբերգական դեպքերի իրական պատասխանատուներից, տարաբնույթ հերյուրանքների միջոցով վարկաբեկել Գագիկ Ծառուկյանի բարի անունն ու պատիվը:**

# Պայթյուն Վանաձորում

Օգոստոսի 27-ին՝ ժամը 14.30-ին, շտապօգնության ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզում՝ Վանաձորի Թումանյան փողոցի թիվ 16 հասցեում գտնվող «Հրայր եւ Արամ» ՍՊԸ-ի թթվածնի լիցքավորման արտադրամասում, տեղի է ունեցել պայթյուն եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Դեռեւս չպարզված հանգամանքներում թթվածնի բալոնները «ԳԱԶ-53» մակնիշի 36 OL 018 պ/հ ավտոմեքենայի մեջ տեղադրելու ժամանակ տեղի է ունեցել բալոնի պայթյուն: Պայթյունի հետեւանքով արտադրամասի աշխատակից, Վանաձորում բնակվող 1980 թ. ծնված Ստեփան Մելիքյանը տեղում զոհվել է, իսկ երկու այլ աշխատակից՝ Դարբաս գյուղի բնակիչներ՝ 1980 թ. ծնված Վահե Ավետիսյանը եւ 1979 թ. ծնված Արտյոմ Ավագյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր: Ավելի ուշ Վ. Ավետիսյանը տեղափոխվել է Երեւանի վնասվածքաբանության գիտական կենտրոն, իսկ Ա. Ավագյանը՝ Վանաձորի թիվ 2 հիվանդանոցի աչքի բաժանմունք: Ըստ հերթապահ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը բավարար է:

ՀԱՄԱՌՈՏ

## Նոր նարկոլոգիական բաժանմունք՝ դատապարտյալների համար

**Երեկ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բացվեց նոր նարկոլոգիական բաժանմունք՝ Հարավային Կովկասի թմրամիջոցների հակազդման ծրագրի շրջանակներում, Եվրոմիության ֆինանսավորմամբ: Այս բաժանմունքի ստեղծման գործն իրականացրել են ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն ու Միջազգային կարմիր խաչի կոմիտեն, աշխատուժն ու նորոգման հսկողությունն ապահովել է արդարադատության նախարարությունը: Շնորհիվ այս նոր բաժանմունքի աշխատանքի կբարելավվի դատապարտյալներին մատուցվող բուժծառայությունների որակը, նարկոլոգիական կախվածությամբ ազատազրկվածների բուժման գործը նույնպես կհեշտանա, ինչպես նաեւ հնարավոր կլինի տուբերկուլյոզով հիվանդ դատապարտյալներին առանձնացնել մյուսներից:**

## Մոլդովայում իշխանության եկավ ընդդիմությունը

**Մոլդովայի խորհրդարանում 101 մանդատից 53-ը ստացած ընդդիմադիր դաշինքը ընտրել է խորհրդարանի նախագահ, որը ռումինամետ Միխայ Գիմպուն է: Երկրի նախագահին նույնպես ընտրում է խորհրդարանը, սակայն այս դեպքում 61 մանդատ է անհրաժեշտ, այստեղ ընդդիմադիրները պետք ունեն գործակցելու կոմունիստ պատգամավորների հետ, ըստ նախնական կանխատեսումների՝ երկրի նախագահ կարող է ընտրվել պառլամենտի նախկին ղեկավար Մարիան Լուպուն, իսկ ահա կառավարությունն ու նրա ղեկավարին նույնպես նշանակելու են ընդդիմադիր 53 պատգամավորները:**

# «Եթե ընդհատվի երկխոսությունը Հայաստանի հետ, ապա Կոնգրեսը կանցկացնի ցեղասպանության ճանաչման բանաձեւ»

*Անկարայում նախագահ Գյուլին զգուշացրել է ամերիկացի կոնգրեսականը*

Մինչ Թուրքիայում թեժանում էր վարչապետ Էրդողանի «քրդական» նախաձեռնության շուրջը ծավալվող իշխանություն-ընդդիմություն պայքարը, օգոստոսի 27-ին Անկարա է ուղեւորվում ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի «Թուրքիա» խմբի համանախագահ Ռոբերտ Ուեքսլերը: Թուրքամետի համարում ունեցող այս կոնգրեսականը հանդիպում է Թուրքիայի ղեկավարների հետ, այդ թվում՝ նախագահ Աբդուլլահ Գյուլի:

Հանդիպումներում քննարկվում են տարածաշրջանի զարգացումներին եւ երկկողմ հարաբերությունների առնչվող մի շարք խնդիրներ, սակայն կողմերը կենտրոնանում են էներգետիկայի հարցերի եւ հատկապես «քրդական» նախաձեռնության վրա, ըստ երեւույթին ելնելով այս նախաձեռնությունը ամերիկյան պատվերով պայմանավորելու ընդդիմության դիրքորոշումից:

Թերեւս կարելի էր չանդրադառնալ Ուեքսլերի այցին, եթե նա նախագահ Գյուլի հետ հանդիպմանը Հայաստանի հետ երկխոսության առնչությամբ չզգուշացներ Թուրքիային: Հասկանալի է, որ երեկ թուրքական թերթերից միայն «Սաբահն» է անդրադարձել դրան, ընդ որում՝ «Բարեկամական նախազգուշացում Թուրքիային» վերնագրով: Ահա թե ինչ է գրել «Սաբահը». «Ներկայացուցիչների պալատի «Թուրքիա» խմբի համանախագահ Ուեքսլերը Հայաստանի հետ երկխոսության գործընթացն արագացնելու կոչ արեց Անկարային: Աբդուլլահ Գյուլի հետ հանդիպմանը նա ասաց. «Եթե Հայաստանի հետ երկխոսության գործընթացը շարունակություն չունենա, ապա (ցեղասպանության) հայկական պնդումներին առնչվող բանաձեւը վերստին կհայտնվի ԱՄՆ-ի Կոնգրեսի օրակարգում եւ այս անգամ կանցնի»: Նա խոսք տվեց նպաստել թուրք-ամերիկյան տնտեսական հարաբերությունների զարգացմանը»:

Ավելացնենք, որ ամերիկացի կոնգրեսականը ոչ թե նախազգուշացրել է, այլ ակնհայտորեն սպառնացել է Թուրքիային, ընդ որում՝ վերջինի համար ամենախոցելի զենքով:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

AZG NEW 2.QXD 8/28/2009 9:35 PM Page 1





# 2009-ին՝ 10-15 տոկոս տնտեսական անկում, 2010-ին՝ 1-1,5 տոկոս աճ

## *Նման կանխատեսմամբ հանդես եկավ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը*

Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 18,5 տոկոս անկումն այս տարվա հունվար-հուլիս ամիսներին, ըստ ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանի**, անակնկալ չէր: Երեկ «Նովոստի» գործակալությունում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նախարարը նշեց, որ նման ցուցանիշներ կանխատեսվում էին և՛ ֆինանսների նախարարության, և՛ միջազգային տնտեսական կառույցների կողմից: Տիգրան Դավթյանի հավաստմամբ, կառավարության հակաճգնաժամային քայլերի արդյունքներն արդեն տեսանելի են, եւ դրանք հատկապես ակնառու կդառնան այս տարվա 4-րդ եռամսյակում: Ֆինանսների նախարարը կրկնեց նախորդ մամուլի ասուլիսի ժամանակ իր հայտնած տեսակետը, ըստ որի՝ Հայաստանի տնտեսության մեջ նկատվում են կայունացման միտումներ: Նա այն կարծիքը հայտնեց, որ տարեվերջին տնտեսության անկման ցուցանիշն ավելի բարվոք կլինի եւ կգտնվի 10-15 տոկոսի սահմաններում, իսկ 2010-ին կհաջողվի ապահովել 1-1,5 տոկոս տնտեսական աճ:



Ինչ վերաբերում է պետական բյուջեի կատարմանը, ապա նախարարը տեղեկացրեց, որ 7 ամսվա կտրվածքով եկամուտները կազմել են 359 մլրդ դրամ, ծախսերը՝ 426 մլրդ դրամ: Դեֆիցիտն ընդհանուր առմամբ կազմել է 67 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի շուրջ 4,7 տոկոս է: Տիգրան Դավթյանը նշեց, որ բյուջեի դեֆիցիտ-ՀՆԱ հարաբերակցությունն այս տարի կկազմի մոտ 6,5 տոկոս, իսկ 2010-ին կնվազի մոտ 1 տոկոսի չափով եւ կկազմի 5- 5,5 տոկոս: Գնաճի մակարդակը, նախարարի խոսքերով, Հայաստանում շարունակում է մնալ ցածր:

Ռուսական վարկի առնչությամբ ֆինանսների նախարարը հայտնեց, որ շուրջ 185 մլրդ դրամից իրական տնտեսությանն է ուղղվել 120 մլրդ դրամը: Այդ գումարից 38,6 մլրդ դրամն արդեն ներդրվել է տնտեսության իրական հատվածում: Կառավարությունը փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) խթանմանն է ուղղել շուրջ 50 մլն դոլար սեփական միջոցներից եւ նույնքան էլ՝ Համաշխարհային բանկից ստացված վարկերից: Տիգրան Դավթյանի համոզմամբ, այդ վարկերի արդյունքները տեսանելի կլինեն արդեն այս տարվա չորրորդ եռամսյակում: Նախարարը հույս հայտնեց, որ ներգրավված միջոցները, մեծացնելով հայաստանյան առեւտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի առաջարկը, կարող են հանգեցնել նաեւ վարկերի տոկոսադրույքների որոշակի իջեցմանը:

Տիգրան Դավթյանը նշեց, որ 2010-ի պետական բյուջեն լինելու է իրատեսական եւ բավականին համեստ, իսկ այս տարվա բյուջեն կատարվում է բավականին արդյունավետ: «Ճգնաժամը բյուջեի ընթացիկ կատարման վրա չի ազդել: Նույնիսկ որոշ ծախսեր կատարվում են ավելին, քան նախորդ տարիներին, օրինակ՝ շուրջ 18 տոկոսով ավելացել են սոցիալական ծախսերը: Դրանց ավելացման դինամիկան կպահպանվի, քանի որ դրա համար բյուջեն բավականին մեծ ռեսուրսներ ունի: Այդուհանդերձ, աշխատելու ենք խնայողական ռեժիմով, ինչպես հիմա. չենք անելու այն ծախսերը, որոնք էական նշանակություն չեն ունենա տնտեսության զարգացման համար», ասաց նախարարը՝ ավելացնելով, որ այս տարվա համար նախատեսված 945 մլրդ դրամի ծախսերից կիրականացվի 905-910 մլրդ դրամի ծախս: Այսինքն, ծախսերի նախատեսված 10 տոկոս կրճատումից ավելի պակաս կլինեն խնայումները: Տիգրան Դավթյանն աննպատակահարմար է համարում սեկվեստրի՝ ծախսերի կրճատման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դա կնշանակեր եւս մեկ հարված տնտեսությանը: «Մենք կատեգորիկ դեմ ենք ծախսերի կրճատմանը եւ նման մտադրություն չունենք», ընդգծեց ֆինանսների նախարարը:

Հայաստանի պետական պարտքի մասին խոսելով, Տիգրան Դավթյանն այն համարեց կառավարելիի եւ թույլատրելիի շրջանակներում: Նշելով, որ «Պետական պարտքի մասին» օրենքով թույլ չի տալիս վարկեր ներգրավել երկրի ՀՆԱ-ի 60 տոկոսից ավելի չափով, նախարարը փաստեց, որ այդ չափաքանակը չեն հասել եւ հասնելու մտադրություն չունեն:

Անդրադառնալով այն հարցին, թե ԱՊՀ երկրների կտրվածքով Հայաստանի տնտեսությունն ամենաշատն է տուժել ճգնաժամից, Տիգրան Դավթյանը նշեց, որ եթե Հայաստանը համեմատվում է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք Ռուսաստանը, Ղազախստանն ու Ադրբեջանն են, ապա դրանք մինչ ճգնաժամն ունեցել են հանքարդյունաբերական արտադրանքի կուտակված մեծ պաշարներ: Հայաստանն այս առումով նրանց հետ չէր կարող համեմատվել եւ այս պարագայում ավելի խոցելի էր: Այդուհանդերձ, Հայաստանը բանկային համակարգի կայունությամբ, սոցիալական ծախսերի եւ պետական աշխատավարձերի պահպանման եւ վճարման առումով առաջ է շատ ու շատ զարգացող տնտեսությամբ երկրներից, իսկ ՀՆԱ 18,5 տոկոս նվազման պայմաններում գրեթե նույնքան էլ ավելացել են աշխատավարձերը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*ՄԱՐՏԻ 1-Ի ՀԵՏՔԵՐՈՎ*

# ՀԱԿ-ի մեղադրանքները ժամանակավոր ...

*1-ին էջից*

Ու եթե ՀԱԿ-ը կամ Անդրանիկ Քոչարյանը, կամ որեւէ մեկը այդ մեկ տարվա ընթացքում ուզենար որեւէ ապացույց ունենալ՝ վաղուց իրենց պատառոտել էին, այդպիսի ապացույցներ չկան, որովհետեւ այդպիսի բան չի եղել: Աջակցում եմ, որ այդպիսի հետաքննություն արվի», ասաց նա:

Ինչո՞ւ չդիմենք, որ ՀԱԿ-ը ինֆորմացված մարդիկ տրամադրի՝ ստուգելու մեղադրանքը, առաջարկեց Ս. Նիկոյանը: Ա. Մինասյանն էլ ասում էր՝ սա ավելի նախաքննական մարմնի գործն է... բացի այդ՝ մի մարմնի վերաբերյալ պետք է ուսումնասիրություն կատարել, որը գոյություն չունի, սա իրավական նոնսենս է: Ս. Նիկոյանը քննարկումն ամփոփեց՝ հանձնաժողովականների ընդհանուր տեսակետն է, որ ուսումնասիրվի այս փաստաթղթում առկա տեղեկատվությունը, փաստաթուղթն արդեն ուղարկվել է նախաքննական մարմին, իսկ ԺՀ-ն կստեղծի աշխատանքային խումբ՝ հրավիրելով նաեւ ՀԱԿ-ի այն ներկայացուցչին, ով ինֆորմացված է:

Ավելի ուշ Ս. Նիկոյանն **«Ազգին»** ասաց, թե ըստ էության հանձնաժողովը կարող էր այդ հարցը չուսումնասիրել, որովհետեւ կարող է ստանալ նմանատիպ հազար գրություն, որտեղ կարող են հղում արվել հավաստի աղբյուրների, որոնք չեն ցանկանում բացահայտվել. «Բայց եթե նույնիսկ դա պարունակում է զրպարտության էլեմենտներ կամ մեղադրանքներ, միեւնույն է, ես գտնում եմ, եւ հանձնաժողովը գտավ, որ մենք պետք է կատարենք ուսումնասիրություններ»: Արդյո՞ք այդ պատճառով կարող է զեկույցն ուշանալ.«Ես կարծում եմ, որ նման զեկույցներով, որ ուղարկում են հանձնաժողովին՝ նաեւ նման խնդիր են ուզում լուծել, որպեսզի զեկույցի ժամկետը հնարավորինս հետաձգեն կամ տեղափոխեն:

Մենք շատ օպերատիվ կաշխատենք եւ կփորձենք այդ բոլոր հարցերին հրապարակային-փաստաթղթային պատասխան տալ: Բայց միեւնույն ժամանակ նախաքննական մարմնից եւ դատախազությունից հանձնաժողովը պահանջելու է, որ նման խնդիրներին նաեւ իրավական գնահատական տա: Կամ պարզաբանի՝ եղել է, եւ մենք դրան իրավական գնահատական կտանք, իսկ եթե ոչ՝ մարդկանց զրպարտության գնահատականը տա, դա շատ կարեւոր է, այլապես սա կարող է անվերջ կրկնվել»:

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերում էր վերջնական զեկույցի ձեւավորման ընթացքին: Ավելի վաղ աշխատանքային քննարկման ընթացքում ձեւավորվել էր աշխատանքային խումբ՝ Նաիրա Զոհրաբյան ու Արամ Սաֆարյան կազմով, որոնց առաջադրանք է տրվել, որպեսզի նրանք գրեն զեկույցի համար 2008-ի նախագահական ընտրությունների նախընտրական եւ հետընտրական քարոզչության հիմնական մոտեցումները, եւ ձեւավորեն հանձնաժողովի գնահատականն այդ երեւույթներին: Արամ Սաֆարյանը ներկայացրեց այդ զեկույցը կամ զեկույցի նախաբանը: Այն ներառում էր նախընտրական զարգացումներին, ընտրությունների օրվան, ընթացքին եւ հետընտրական զարգացումներին վերաբերող դրվագների գնահատականների ամբողջությունը՝ ընդհուպ մարտի 1-ի օրը: Ղեկավարվել են մի սկզբունքով՝ պետք է վերլուծվեր, ուսումնասիրվեր եւ շարադրվեր այնպես, որ մեկընդմիշտ հասարակության համար բացառվի քաղաքական կրքերի այնպիսի բորբոքում, որը կարող է հանգեցնել ատելության եւ թշնամանքի, իրարամերժության եւ անվստահության, հանգեցնի հասարակության այնպիսի ծայրահեղ բեւեռացմանը, որը եղավ մարտի 1-ին: Զեկույցը կազմելիս՝ առաջնորդվել են մի քանի կարեւոր փաստաթղթերով, որոնք ընդունելի գնահատականներ են պարունակում մարտի 1-ի իրադարձության նախապատմության հետ. ԵԱՀԿ դիտորդական միացյալ առաքելության վերջնական եզրակացությունը նախագահական ընտրությունների վերաբերյալ՝ ԵԱՀԿ ԺՀ-ՄԻԳ առաքելության, ԵԱՀԿ ԽՎ դիտորդական առաքելության, Եվրախորհրդարանի դիտորդական առաքելության եզրակացությունների ամբողջությունը, որոնք հիմք են ծառայել ստեղծված նախաբանի համար: Նաեւ՝ ԵԽԽՎ հայտնի բանաձեւերը, որոնք վերաբերում են մարտի 1-ի իրադարձություններին, եւ որոնցից առաջինը եւ նրան հաջորդողները անդրադարձ են ունեցել նախընտրական զարգացումների, ընտրությունների ընթացքի վրա: Որպես հիմք օգտագործվել է նաեւ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը՝ մարտի 1-ի իրադարձությունների վերաբերյալ, ինչը նիստին ներկա **Արմեն Հարությունյանը** ողջունեց: Այդ նախաբանն այս երկու օրը կամբողջանա հանձնաժողովականների առաջարկների հիման վրա:

# ՀԱԿ ներկայացուցիչը դեմ է եղել ամերիկացի փորձագետ ներգրավելուն

## *Հարցազրույց փորձագիտական փաստահավաք խմբի նախկին անդամ, կոալիցիայի ներկայացուցիչ Ռոբերտ Ավագյանի հետ*

**- Պարոն Ավագյան, փաստահավաք խմբում ընդդիմության ներկայացուցիչները օրերս հրապարակեցին մարտի 1-ի վերաբերյալ իրենց՝ թվով 4-րդ զեկույցը...**

- Եկեք մի փոքր հստակություն մտցնենք: Նրանց ներկայացրած զեկույցն իսկապես իրենց ցանկություններն ու նպատակադրումներն ամփոփող հերթական փաստաթուղթն է: Սակայն, եթե առաջին դեպքում Համլետ Թադեւոսյանի մահվան առնչությամբ եղած փաստաթուղթը ձեւական առումով հեղինակել է փաստահավաք խումբը, ապա մյուս դեպքերում պետք է խոսել Անդրանիկ Քոչարյանի ու Սեդա Սաֆարյանի ինքնագործունեության արդյունքի մասին: Այսինքն՝ Համլետ Թադեւոսյանի մահվան հանգամանքների վերաբերյալ զեկույցը եղել է փաստահավաք խմբի վերջին փաստաթուղթը, որին, հիշեցնեմ, ես եւ իմ գործընկեր Գեւորգ Թովմասյանը համաձայն չենք եղել եւ այդ փաստաթղթի տակ չենք ստորագրել: Դրանից հետո ներկայացված փաստաթղթերը փաստահավաք խմբի հետ որեւէ առնչություն չունեն:

**- Այնուամենայնիվ կա զեկույց, որտեղ ներկայացված են տվյալներ, որոնք, ըստ հեղինակների, խումբը ձեռք է բերել դեռ այն ժամանակ, երբ գործում էր: Ի՞նչ կարծիքի եք հրապարակված փաստաթղթում ներկայացված եզրակացության ու տրված գնահատականների մասին:**

- Դրանք սկզբից մինչեւ վերջ հորինված են: Ժողովրդական լեզվով ասած՝ աղվեսն իր պոչն է վկա բերում: Զեկույցի անվան տակ ներկայացրել են մի տեղեկանք, որն իրենք են կազմել: Այսպես կոչված հանդերձավորման վերաբերյալ գրությունը խմբին ուղարկել է Լեւոն Զուրաբյանը՝ չնշելով իր ներկայացրած տվյալների ու փաստերի ձեռքբերման ոչ մի աղբյուր: Լեւոն Զուրաբյանի գրությունից բացի, փաստահավաք խումբը որեւէ այլ փաստ ձեռք չի բերել:

**- Իսկ ձեռք բերելու փորձ արվե՞լ է:**

- Մենք ուզում էինք նախ Լեւոն Զուրաբյանին հրավիրել խումբ: Սակայն ընդդիմության ներկայացուցիչները դեմ էին: Համենայն դեպս՝ հարցը ձգձգեցին: Իսկ այսօր փաստաթուղթ են հրապարակել, ներկայացրել իրենց ցանկալին՝ կայացած փաստի ձեւով ու նշել, թե տեղեկությունը հավաստի է, բայց աղբյուրը բացահայտել չի կարելի: Ինչպե՞ս կարելի է նման անհեթեթություններին լուրջ վերաբերվել:

**- Ինչի՞ մասին են վկայում ձեր մատնանշած հանգամանքները:**

- Մեկ անգամ եւս շեշտեմ՝ այս այսպես կոչված զեկույցը մտացածին է: Նշված հարցի վերաբերյալ նրանց արած հետեւություններն անհիմն են եւ փաստերից զուրկ: Որեւէ անձ, նույնիսկ մասնագիտական պատրաստվածություն չունեցողը, ով անգամ որեւէ առնչություն չունի դիտարկվող իրադարձություններին, կարող էր նմանատիպ ենթադրություններ անել: Շատերն էլ կարող էին այլ ենթադրություն անել: Դրանք, կրկնում եմ, հորինված են:

Տեսեք, իրենք հայտարարել են, թե ոստիկանությունը խմբին ուղարկած գրությամբ հայտնել է, որ 25 կամ 29 ինքնաձիգ է բաժանվել ոստիկանական ստորաբաժանումներին: Սա ճիշտ է, բայց՝ թերի: Իրականում փաստն այն է, որ ոստիկանությունը մեկ անգամ չէ, որ հայտարարել է այս մասին, որ բուն միջոցառմանը մասնակցել են 25 կամ 29 զինված ոստիկան, բայց դա չի բացառում, որ կառավարության շենքի պահպանության, նախագահի աշխատակազմի շենքի պահպանության, ԱԺ շենքի եւ այլ հատուկ պահպանվող օբյեկտների անվտանգությունն ապահովելու համար եղել են ոստիկանության զինված ստորաբաժանումներ: Այսինքն, այդ 25 կամ 29-ը, տվյալ դեպքում կարեւոր չէ, վերաբերում է բուն միջոցառմանը ներգրավված զինված ոստիկաններին: Այս էլեմենտար փաստը իրենք խեղաթյուրում են ու ներկայացնում այնպես, ինչպես իրենց է ձեռնտու: Այդ բոլոր փաստերը եղել են նաեւ փաստահավաք խմբում, բայց ընդդիմադիր բանախոսները ներկայացնում են միայն իրենց սցենարի համար ձեռնտու տեղեկությունները: Բնականաբար, հետեւությունն էլ որեւէ քննադատության դիմանալ չի կարող:

Ես ձեզ հայտնեմ, որ անգամ Համլետ Թադեւոսյանի մահվան առնչությամբ զեկույցում փաստական հանգամանքներն այնպիսին են, որ չեն կարող բերել այն եզրակացության, որոնց իրենք են հանգել: Նրանք ցանկանում են լսել միայն այն, ինչը համապատասխանում է իրենց ցանկություններին ու մտադրություններին: Ես ձեզ ավելին ասեմ: Համլետ Թադեւոսյանի մահվան հանգամանքների առնչությամբ զեկույցը երբ նախապատրաստվում էր, Անդրանիկ Քոչարյանը փաստեր էր բերում, թե ահա, տեսեք, երեւի ինքն իր նռնակի պայթյունից է զոհվել: Մինչդեռ ձեռք բերված փաստերը ողջամտորեն եւ ոչ ողջամտորեն այդ հետեւությանը հանգեցնել չէին կարող: Եվ ես ասացի, որ եկեք՝ դիմենք ԱՄՆ դեսպանին, ով բազմաթիվ անգամներ առաջարկել էր փորձագետ հրավիրել. թող փորձաքննություն անցկացնեն: Իսկ ինքը՝ Անդրանիկ Քոչարյանը հրաժարվեց դա անել:

**- Անդրանիկ Քոչարյանը մերժե՞լ է արտերկրից փորձագետ հրավիրելու առաջարկը:**

- Այո՛: Երբ այդ հարցով տարակարծություններ կային, ես առաջարկեցի, բայց նա հրաժարվեց:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# «Սփյուռքը դեմ է, որ հակադարձվի բարեկամական այցը»

## *Սփյուռք ասելով՝ թուրքական թերթը նկատի է առնում Հայ հեղափոխական դաշնակցությանը*

***Երեկվա համարում «Հյուրիեթը» այս վերնագրով է անդրադարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հուլիսի 28-ի հայտարարության հայկական արձագանքներին: Անդրադարձը կատարել է թուրքական այս թերթի մոսկովյան թղթակից Ներդուն Հաջիօղլուն: Ստորեւ ուշադրության ենք ներկայացնում նրա թղթակցությունը.***

«Անցյալ տարի Երեւանում նախագահ Աբդուլլահ Գյուլը նախագահ Սերժ Սարգսյանի հետ դիտել էր Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը, եւ այս հանդիպումով կատարվել էին «բարեկամության» հաստատման համար անհրաժեշտ առաջին քայլերը: Պատասխան խաղը հոկտեմբերի 14-ին Բուրսայում է նշանակված:

Հայկական սփյուռքը հակազդեցությամբ է արձագանքում Թուրքիայի հետ Հայաստանի քաղաքական հարաբերություններին, որոնք ենթադրաբար հաստատվելու են «ֆուտբոլային դիվանագիտության» միջոցով: Գյուլի երեւանյան այցից հետո բոլորի հայացքը պատասխան խաղի համար ուղղվեց դեպի Հայաստան:

### Երեւանում այլ կարծիքի են

Մինչ հայ քաղաքական գործիչները պնդում են, որ նախագահ Սերժ Սարգսյանը ֆուտբոլային հանդիպման համար մեկնի Թուրքիա, աշխարհում հայկական սփյուռքին ներկայացնող Դաշնակցություն կուսակցության ղեկավարները առարկությամբ հակադրվում են դրան, ասելով. «Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը պետք է ընդունի շուրջ մեկ տարի առաջ սկզբնավորված հաշտեցման ձեռնարկումների ձախողումը եւ հրաժարվի ֆուտբոլային հանդիպման համար Թուրքիա մեկնելու մտադրությունից»: Դաշնակցական կուսակցությունը, համարելով արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին Թուրքիայի հետ ավելի քան մեկ տարի տեւած «սիրաբանության» գլխավոր պատասխանատու, պաշտոնից նրա հրաժարականի պահանջ ներկայացրեց: Այս կուսակցությունը Թուրքիա-Հայաստան-Շվեյցարիա հայտարարության հրապարակումից հետո դուրս էր եկել կառավարող կոալիցիայի կազմից:

### Թուրքերը պատասխան քայլ են պատրաստել

«Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Բեքարյանն ասում է. «Նախագահ Սարգսյանի պատասխան այցի դեպքում Հայաստանը կդրսեւորի կառուցողական մոտեցում: Հետեւաբար Սարգսյանը պետք է մոռանա «Թուրքիա կմեկնեմ, եթե արդեն իսկ ունենանք բաց սահման» խոսքերը եւ գնա ֆուտբոլային այդ խաղին: Որքան էլ վերջին ամիսներին դանդաղի հաշտեցման գործընթացը, Թուրքիան հավանաբար հակաքայլ արդեն ունի, հետեւաբար վերջակետը պետք չէ, որ Հայաստանը դնի»:

Թուրքագետ Հակոբ Չաքրյանը ավելացնում է. «Թուրքիայի հետ երկխոսության մակարդակը անբավարար է: Եթե այդ պատճառով նախագահ Սարգսյանը հրաժարվի մեկնել, ապա Անկարան կձերբազատվի պատասխանատվությունից: Այդ դեպքում Թուրքիան ի լուր աշխարհի կհայտարարի, որ իրենք արել են հնարավոր ամեն ինչ երկխոսության համար, իսկ հայերը՝ խափանել»:

### Պարտավորություններից խուսափեցին թուրքերը

Դաշնակցության հայաստանյան ներկայացուցիչ (Հայ դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու) Կիրո Մանոյանը նշում է. «Եթե Սարգսյանը խոսքի տերն է, ապա հոկտեմբերի 14-ի ֆուտբոլային հանդիպմանը չի գնա: Առնվազն միամտություն կլինի մտածել, որ առաջիկա 1,5 ամսում սահմանը կբացվի: Եթե նույնիսկ Սարգսյանը հրաժարվի այցելել Թուրքիա, միեւնույն է, հետքայլ կատարող կողմը Հայաստանը չի լինելու, որովհետեւ համաձայն Շվեյցարիայի միջնորդությամբ ստորագրված «ճանապարհային քարտեզի», սահմանը արդեն բացված պետք է լիներ: Համաձայնությունը խախտել է թուրքական կողմը: Հայաստանի ղեկավարությունը հայտարարելով Թուրքիա չմեկնելու որոշման մասին, միաժամանակ պետք է հայտարարի, որ հարաբերությունների նորմալացման գործընթացը Անկարան է կացնահարել»:

Հ. Զ.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

# Հայկական լոբբինգը պարտություն չի կրել, պարտվել է աշխարհի ժողովուրդը

**Ամերիկայի հայկական համագումարի Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի գրասենյակների տնօրեն (ԱՀՀ) նախագահ Արփի Վարդանյանը մեկ շաբաթ առաջ Կալիֆոռնիայի դատարանի Հայոց ցեղասպանության զոհի ժառանգի հայցը հակասահմանադրական ճանաչելու վճիռը որակում է խայտառակություն: Ըստ նրա՝ երկու դատավորները վճիռը կայացնելու ժամանակ հաշվի չեն առել փաստերի մի մասը:**

**«Ոչ ոք չի հերքում, որ 1915-ին 1,5 մլն մարդ է մահացել: Դատավորները հաշվի չեն առել, որ դեպարտամենտի աշխատակիցները, ԱՄՆ նախագահ Ռեյգանը օգտագործել են «ցեղասպանություն» բառը: Հաշվի չեն առել, որ 43 նահանգներում ընդունվել են դեկլարացիաներ՝ ցեղասպանության ճանաչման կապակցությամբ: Հաշվի չեն առել նաեւ, որ Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերը օգտագործում է «ցեղասպանություն» բառը: Եվ վերջապես նրանք հաշվի չեն առել, որ ԱՄՆ 5 նահանգների դպրոցներում Հայոց ցեղասպանություն առարկա է դասավանդվում», նկատեց Արփի Վարդանյանը:**

**«Այդ վճռից կարելի՞ է ենթադրել, որ Կալիֆոռնիայում հայկական լոբբինգը պարտություն կրեց», «Ազգ»-ի հարցին Արփի Վարդանյանը նկատեց, որ այդ վճռով ոչ թե հայկական լոբբինգը պարտություն կրեց, այլ պարտվեց աշխարհի ժողովուրդը:**

**«Այստեղ պարտություն չկա, կա սուտ: Այսպիսի հերքումներով, ժխտելով իրողությունը, աշխարհի ժողովուրդներն են հայտնվում վտանգի տակ: Այս վճիռը հետ է գցել ցեղասպանությունների կանխարգելման պրոցեսը», ասաց նա: Վարդանյանը հավելում է, թե գործընթացը շարունակվում է, հետեւաբար, վաղ է կանխագուշակել, թե վճիռն ինչպիսի ազդեցություն կթողնի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման վրա:**

**ԱՀՀ առաջիկա գլխավոր խնդիրներից է նախագահ Օբամայի վարչակազմին համոզիչ կերպով փաստել, որ Կալիֆոռնիայի դատարանը սխալ է հասկացել ԱՄՆ կառավարության դիրքորոշումը այդ հարցի կապակցությամբ:**




**Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների ներկա փուլին, Արփի Վարդանյանը նկատում է, որ Թուրքիան կարծես այս հարցին լուրջ չի վերաբերվում: «Սահմանը պետք է բացվի, բայց Թուրքիան պետք է կարողանա լուրջ քայլերով արտահայտել իր ցանկությունը: Մյուս կողմից, այդ ցանկությունը չպետք է կապված լինի այլ խնդիրների, մասնավորապես Հայ դատի եւ ղարաբաղյան հարցի հետ», հավելեց Արփի Վարդանյանը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Թուրքը մնում է թուրք

***«Դուպլեքս» ակումբում ասուլիս էր հրավիրել ՀՀԿ Ազգային ժողովի պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյանը: Նա նույնպես որոշել էր անդրադառնալ հայ-թուրքական հարաբերություններին՝ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպման ֆոնին:***

Պարոն Պետրոսյանը նշեց, որ Հայաստանի անկախության առաջին տարիներից մինչ հիմա ինքը թուրքական կողմից հարաբերությունների լավացման քայլեր չի տեսել եւ չի տեսնում. «Նրանք միշտ էլ խաբել են մեզ, խաբել ու հասել են իրենց նպատակներին»: Եվ այսօր որեւէ դրական շարժում Թուրքիայի կողմից չի նկատվում՝ չնայած հայկական կողմը ամեն ինչ անում է դրա համար:

«Մեր կուսակցությանը շատ լրատվամիջոցներ մեղադրում են Թուրքիայի նկատմամբ փափուկ լինելու մեջ, սակայն Հանրապետական կուսակցությունն ընդամենը ուզում է բացել հայ-թուրքական սահմանը՝ խթանելով առեւտրական, տնտեսական կապերը: Բայց մենք դա ուզում ենք ոչ ամեն գնով, ոչ մեր ազգային շահերին դիպչելու հաշվին», շեշտեց պատգամավորը:

Բանախոսը նշեց նաեւ, որ ինքը չի հավատում հայ-թուրքական անկեղծ հարաբերություններին: Եվ, որքան էլ թուրքական կողմը տարբեր պաշտոնյաների շուրթերով հրավիրում է նախագահ Սարգսյանին ֆուտբոլ դիտելու, Պետրոսյանի կարծիքով, ինչը նա վստահեցրեց նաեւ Հանրապետական կուսակցության անունից, նախագահը չի գնա, եթե սահմանի բացման ուղղությամբ լուրջ քայլեր չարվեն. «Ընդ որում, ես համոզված եմ, որ Թուրքիան առանց ԱՄՆ-ի թելադրանքի նման բան չի անի, քանի որ թուրքերի ճնշող մեծամասնությունը շարունակում է մնալ հայատյաց», ավելացրեց բանախոսը:

«Նախագահի չմեկնելու դեպքում դեպքերը պետք է նման կերպ զարգացնել, շարունակեց նա, մենք պետք է մեղադրենք Թուրքիային պայմանավորվածությունները չկատարելու մեջ, ավելի հետեւողական լինենք Ղարաբաղի ու ցեղասպանության հարցերում՝ հենվելով Ռուսաստանի վրա»:

Լրագրողների հարցին, որ եթե գիտեինք, որ թուրքը մնում է թուրք, ինչո՞ւ գնացինք հարաբերությունների կարգավորմանը, բանախոսը պատասխանեց, որ դա արվել է նախ աշխարհին ներկայացնելու ՀՀ պատրաստակամությունը. մենք առաջին քայլն արեցինք, եւ երկրորդ՝ մենք ստուգեցինք Թուրքիայի իրական մտադրությունները:

Ներքաղաքական իրադարձություններից պարոն Պետրոսյանը խոսեց սպասվելիք «թեժ աշնան» մասին՝ ասելով, որ ինքը դրան չի հավատում, առավել եւս չի հավատում ընդդիմության միավորմանը, քանի որ. «Նրանք բոլորն էլ տարբեր բաներ են ուզում»:

Վերջերս վրաց սահմանապահների կողմից ՀՀ սահմանն անցնելու եւ այստեղ կամայականություններ անելու վերաբերյալ բանախոսը նշեց, որ ինքը չի ընդունում ՀՀ ԱԳՆ լռությունը, սակայն նկատեց, որ հայ-վրացական սահմանը դեռ հստակեցված չէ. «Գուցե դրա՞ համար են մտնում»: Պարոն Պետրոսյանի կարծիքով՝ մենք պարզապես դատապարտված ենք Վրաստանի հետ ունենալ լավ հարաբերություններ, չնայած, ըստ Պետրոսյանի, Վրաստանը սխալ քաղաքականություն է վարում մեր նկատմամբ:

Կրկին անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին՝ բանախոսը նշեց, որ նախագահը պարզապես ֆուտբոլ դիտելու համար չի մեկնի Թուրքիա. «Նա իր խոսքի տեր մարդ է»:

Պատգամավորը հիշեց նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որը նշել էր, թե միայն երեսուն տարուց կկարգավորվեն հայ-թուրքական հարաբերությունները, նա նույնպես այդ կարծիքին է:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Մեկ ամիս՝ մինչեւ Հայաստանի հարցի քննարկում ԵԽԽՎ-ում

*1-ին էջից*

**Դեռեւս այդ տարվա հունիսի 24-ին ԵԽԽՎ-ն ընդունեց Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության վերաբերյալ նոր, թվով չորրորդ 1677 բանաձեւը: Բանաձեւի ընդհանուր մասի համաձայն ամրագրվում էր, որ «աճող առաջընթաց» է գրանցվել Հայաստանի իշխանությունների կողմից վեհաժողովի պահանջների կատարման առնչությամբ:**

**Մասնավորապես, ցույցեր, հանրահավաքներ անցկացնելու օրենքից հանվել են հակասական դրույթները, տարվում է մարտի 1-2-ի դեպքերի հետաքննություն, ընդունվել են քրեական օրենսգրքի խնդրահարույց պայմանների կարեւոր փոփոխություններ եւ այլն:**

**Այս գործընթացը, ըստ համազեկուցողների զեկույցի, ընդգրկել էր նաեւ համաներումը, որի արդյունքում շատերը, բայց ոչ մարտյան իրադարձությունների առնչությամբ բոլոր ձերբակալվածները, ազատ են արձակվել: «Համաներման հայտարարումը նշանակում է, որ իշխանությունները կատարել են վեհաժողովի որոշիչ պահանջը եւ, որ ավելի կարեւոր է, նոր կարեւոր էջ է բացվել Հայաստանի քաղաքական կյանքի նորմալացման եւ ճգնաժամի կարգավորման առումով», նշվել էր փաստաթղթում, հավելմամբ, որ այդ ձեռքբերումները չպետք է նշանակեն գործընթացի ավարտ:**

**Բանաձեւում ընդգծվել էին այն բոլոր դրական փոփոխությունները, որ արվել էին ի կատարումն ԵԽԽՎ նախորդ երեք բանաձեւերի՝ 1609, 1620 եւ 1643: Անդրադառնալով փաստահավաք խմբի գործունեության դադարեցմանը՝ բանաձեւում նշվում էր, թե անկախ ամեն ինչից մարտյան իրադարձությունների անկախ ու վստահելի հետաքննությունը մնում է որպես պահանջ:**

**Միեւնույն ժամանակ կոչ էր արվում փաստահավաք խմբի անդամներին՝ Ազգային ժողովի նույն հարցով ժամանակավոր հանձնաժողովին ներկայացնելու իրենց բացահայտումները ու եզրակացությունները, ընդ որում, ԱԺ ժամանակավոր հանձնաժողովն էլ իր հերթին պետք է գնահատեր ամենն ու եզրակացներ, թե արդյոք անհրաժե՞շտ է հետագա քննություն:**

**Վեհաժողովը բանաձեւի ընդունմամբ ամրագրեց լուրջ մտահոգություն գլխավոր դատախազության կողմից մարտյան տասը սպանությունների գործերը որեւէ կոնկրետ արդյունքի չհասցնելու առնչությամբ:**

**Ինչ վերաբերում է լրատվական ոլորտում բարեփոխումների ԵԽԽՎ նախկին բանաձեւերի պահանջների կատարման գնահատականին, ապա 1677 բանաձեւով ողջունվեց 2009 թ. ապրիլի 28-ին Ռադիոյի եւ հեռուստատեսության օրենքում փոփոխությունների ընդունումը:**

**Անդրադառնալով հեռարձակման լիցենզիաների մրցույթների տեխնիկական բաղադրիչների պատճառով հետաձգումներին՝ բանաձեւում ընդգծվում էր, որ այդ ամենը չպետք է օգտագործվի անօրինական ձեւով հետաձգելու այդօրինակ մրցույթների անցկացումը եւ այդ ձեւով չկատարելու մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ա1+ հեռուստաընկերությանը հեռարձակման լիցենզիա չտրամադրելու առնչությամբ որոշումը:**

**Բանաձեւով վեհաժողովը նաեւ վերահաստատել էր իր հետեւողականությունը համաներումից դուրս մնացած մարտյան իրադարձություններին առնչվող գործերի քննության նկատմամբ:**

**Ամեն դեպքում, համաներումն, ըստ էության, չորոշեց իրավիճակի ելքը այնքանով, որ ԵԽԽՎ-ն դա բավարար չհամարեց, ու դեռ սեպտեմբերին ակնկալվում է ԱԺ մարտի 1-2-ի իրադարձությունների հարցերով ժամանակավոր հանձնաժողովի զեկույցը, որը մեծ նշանակություն կունենա նաեւ մոնիտորինգի հանձնաժողովում Հայաստանի հարցով համազեկուցողներ Ժորժ Կոլոմբիեի եւ Ջոն Պրեսկոտի զեկույցը կազմելիս:**

# Ճի՞շտ են ավելացվել տեղական տուրքերը խմիչքների եւ ծխախոտի վաճառքի համար

## *Այս հարցը քննարկվեց Գյումրու հանրային խորհրդի նիստում*

Գյումրու հանրային խորհուրդը գումարեց հերթական՝ 12-րդ նիստը, որի օրակարգում դրված էր երկու հարց: Առաջին տարողունակ հարցը վերաբերում էր 2009 թ. հունվարին համայնքային ավագանու կայացրած մի որոշմանը, որով, ինչպես ներկայացվեց, կրկնակի մեծացվել է քաղաքի վաճառակետերում ծխախոտի եւ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքի չափը՝ նախկին 70 հազար դրամից հասցվելով 140 հազար դրամի: Նիստում լսվեց ու քննարկվեց այդ որոշման եւ դրա ազդեցության վերաբերյալ փորձագիտական երկու հետազոտություն, որոնք իրականացվել են Սախարովի անվան հայկական իրավապաշտպան կենտրոնի ծրագրով, «Մենք պլյուս» հասարակական կազմակերպության պատվերով:

Ներկայացնելով հիշյալ որոշման հանրային արձագանքի իր կատարած սոցիոլոգիական հետազոտության արդյունքները՝ ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու **Նիկոլ Մարգարյանը** նախ նշեց, որ առավել առարկայական պատկեր ստանալու նպատակով փորձ է արվել հետազոտական հարցումների մեջ ներգրավել շահագրգիռ բոլոր կողմերին՝ որոշում կայացնողներին, նշված ապրանքատեսակներն իրացնող տնտեսվարողներին եւ սպառողներին: Սակայն եթե հարցված 60 տնտեսվարողները եւ մոտ 80 սպառող քաղաքացիները հիմնականում պատասխանել են ներկայացված հարցադրումներին, ապա ավագանու 15 անդամներից պատասխանելու պատրաստակամություն են հայտնել ընդամենը 5-ը, ընդ որում, նրանցից միայն մեկն է պատասխանել հարցերի մեծ մասին, իսկ մյուսները՝ հազիվ 2-3 հարցի: Ավելին, ինչպես պարզվել է՝ ավագանու նշված 5 անդամներից 4-ը չեն մասնակցել որոշման կայացմանը, ինչպես եւ նրանցից ոչ մեկը տվյալ որոշման որեւէ հիմնավորում չի կարողացել նշել: Իսկ ընդհանրապես այդ նիստի մասին հստակ տեղեկությունների բացակայությունը (մանավանդ՝ ասեկոսեների առկայությամբ), նաեւ այն, որ հարցումներին մասնակցած տնտեսվարողներից, սպառողներից, նույնիսկ փորձագետ տնտեսագետներից ոչ մեկը չի հիշում ՏԻՄ պաշտոնյաների կամ նրանց պատվիրած որեւէ անձի կողմից վաճառակետերում այդ կարեւոր խնդրի նախնական հետազոտություն կամ իր մասնակցությամբ քաղաքապետարանական որեւէ քննարկում, հետազոտողին ենթադրել են տալիս, որ խնդրո առարկա որոշումը կայացվել է առանց տնտեսագիտական, հասարակական եւ վարչարարական լուրջ հիմնավորումների առկայության: Ինչո՞ւ է տուրքի չափը մեծացվել կրկնակի, այլ ոչ թե եռակի կամ մեկ քառորդի չափով՝ այս հարցի պատասխանը հայտնի չէ: Հարցումները ցույց են տվել, որ չեն պահպանվել նաեւ որոշման հրապարակայնությունն ու թափանցիկությունը նույնիսկ տնտեսվարողների համար:

Իսկ նշված ապրանքատեսակների շուկայում Գյումրիում ինչպիսի՞ պայմաններ են առկա, որոնք կարող են արդարացնել կամ մերժելի դարձնել ՏԻՄ հիշյալ որոշումը: Այս առումով հետազոտության մեջ փորձ է արվել պատասխանելու այն հարցին, թե այդ ապրանքների սպառումը անցած ժամանակամիջոցում ինչպիսի՞ քանակական ու որակական փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես, ըստ տնտեսվարողների հարցման արդյունքների, քաղաքում այդ արտադրատեսակների սպառումը, հետեւաբար նաեւ դրանցից ստացվող եկամուտը ընդհանուր առմամբ նվազել են: Հատկանշական է, որ հատկապես նվազել է արտասահմանյան արտադրության ապրանքների սպառումը, իսկ տեղականինը ընդհանուր համապատկերում նույնիսկ որոշ աճ է գրանցել, ինչը կարելի է ենթադրել, որ տեղի է ունեցել առաջինների հաշվին: Մյուս կողմից, ըստ բերված տվյալների, տեղի է ունեցել գնվող թանկարժեք արտադրատեսակներից անցում էժանագինի, ինչը, ըստ սոցիոլոգի, նույնական է որակյալից պակաս որակյալի անցմանը եւ խոսում է բնակչության սպառողական հնարավորությունների նվազման մասին: Նույն միտումները բացահայտվել են սպառողների հետ անցկացված խմբային հարցումների ընթացքում: Հարցվողներն այս միտումները միայն տեղական տուրքի թանկացման հետ չեն կապում, բայց դա համարում են պատճառներից մեկը, առավել եւս՝ ներկա տնտեսական ճգնաժամի պայմաններում: Բանախոսի եզրակացությամբ՝ նշված ապրանքատեսակների համար սահմանված տուրքի նոր չափին վերաբերող որոշումն անհիմն է, ընդունվել է հապճեպ եւ կարիք ունի վերանայման, նաեւ՝ մեծ ու փոքր տնտեսվարողների միջեւ տարբերակված մոտեցման: Հարցված սպառողների գերակշիռ մասի կարծիքով, նման հարցերը պետք է լուծում ստանան միայն հանրային քննարկման դրվելուց հետո, որին պետք է մասնակցեն նաեւ տնտեսվարողները, անկախ փորձագետները եւ սպառողները:

Ներկայացնելով խնդրո առարկա որոշման եւ դրա հնարավոր հետեւանքների իր կատարած տնտեսագիտական հետազոտությունը, տնտեսագիտության երիտասարդ թեկնածու, Գյումրու հանրային խորհրդի տնտեսագիտական հանձնախմբի անդամ **Ղարիբ Հարությունյանը** մի շարք մասնագիտական առաջարկություններ ներկայացրեց, որոնք, մեր կարծիքով, արժանի են առանձին ուշադրության:

Գյումրու հանրային խորհրդի այս նիստի օրակարգային երկրորդ հարցը ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մշակած եւ լույս ընծայման պատրաստվող Գյումրու երկրորդ ուղեցույց-քարտեզի նախագծի բովանդակության քննարկումն էր:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

# Ամեն մի շենք կառուցելիս պետք է հասկանաս, որ...

- Այսօրվա շինարարական ընկերությունները, կարծում եմ, ամենայն պատասխանատվությամբ պետք է մոտենան իրենց գործին, իսկ այն, որ յուրաքանչյուր ընկերություն պետք է համապատասխանի իր վկայականին եւ ունենա շահույթ, դա միանշանակ է, ասում է «Մեծն Էրիկ» շինարարական ընկերության նախագահ Լեւոն Շահումյանը՝ նկատելով, որ «ինչո՞ւ չէ, ես իմ կադրերից մեկին պետք է ուղարկեմ արտերկիր վերապատրաստվելու, կամ, ասենք, ես ինքս երեք ամիսը մեկ չշփվեմ արտասահմանյան կազմակերպությունների հետ, որպեսզի նորը քաղենք ու բերենք մեր երկիր: Մենք իրավունք չունենք տեղում դոփելու. պարտավոր ենք բոլոր նորամուծություններին ծանոթանալ եւ դրանք մեր պրակտիկայում կիրառել: Գոնե պետք է հաճախակի սեմինարներ կազմակերպվեն, որպեսզի շինարարները կարողանան մեկ քայլ առաջ գնալ: Թեպետ առաջխաղացումը կա, սակայն այս ոլորտում անելիքները շատ են»...



**- Պրն Շահումյան, այս օրերին շատ է խոսվում ֆինանսական ճգնաժամի մասին: Ընդ որում, մի շարք շինարարական ընկերություններ կանգնած են լուրջ խնդիրների առաջ: Ըստ Ձեզ՝ ինչքանո՞վ է այն ազդել առհասարակ շինարարական պրոցեսի վրա եւ արդյո՞ք մոտ ժամանակներս հնարավոր չէ այդ վիճակից դուրս գալ:**

- Ըստ իս՝ ճգնաժամը ինչ-որ չափով «խփեց» շինարարությանը, բայց եւ այնպես կան շատ ու շատ ընկերություններ, որոնք կարողանում են աշխատանքի տեմպը պահել: Օրինակ՝ մեր ընկերությունը 60-70 տոկոսի չափով աշխատում է:Ճիշտ է, իդեալական վիճակում չենք, անցյալ տարվա նման ակտիվ չենք, բայց որ ասեմ՝ մեր դռները փակել գնացել ենք տուն՝ այդպես չէ:

**- Ի դեպ, շինարարության բնագավառում ե՞րբ բացվեցին «Մեծն Էրիկ» ընկերության դռները:**

- Ռուսաստանում ես ինքս եմ ամեն ինչ սկսել 1981-ից: 1989-ին, ավերիչ երկրաշարժի ժամանակ, շատերի հետ ես նույնպես եկա Գյումրի, որպեսզի հնարավորինս կարողանայի ինչ-որ ձեւով օգտակար լինել իմ ժողովրդին: Բավականին ակտիվ ձեւով մասնակցել եմ երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքներին, իսկ հետո (որպես «Սոչի Ստրոյ» կազմակերպության ինժեներ) Գյումրիում կառուցել ենք երեք մանկապարտեզ: Այնուհետեւ 1991-ին, երբ դարձա «Սոչի Ստրոյ» կազմակերպության տնօրեն, այդ տարիներին նույնպես կարողացանք բավականին մեծ ծավալի աշխատանքներ կատարել, թեպետ 1992-ին մեր ընկերությունը վերանվանվեց «Ռոսիա»: Բայց սրան զուգահեռ ես 1995-ին ստեղծել եմ նաեւ իմ սեփական կազմակերպությունը՝ «Շիրակ 95»-ը, որը 2000-ին վերանվանվեց «Մեծն Էրիկ» (կրտսեր որդուս անունով):

**- Իսկ ի՞նչ աշխատանքներ է հասցրել իրականացնել «Մեծն Էրիկ» ընկերությունը, եւ ինչ ձեռքբերումներ ու բացթողումներ եք ունեցել հատկապես այս վերջին մի քանի տարիների ընթացքում:**

- Նախ նշեմ, որ հենց Գյումրի քաղաքում բավականին լուրջ գործ ենք կատարել. վերականգնել ենք «Հոկտեմբեր» կինոյի շենքը, առաջին դպրոցը, մոտ 30-35 շենքեր եւ այլն: Ինչպես նաեւ կառուցել ենք մանկապարտեզներ, դպրոցներ եւ այլն: Այս աշխատանքներից հետո, ավելի ստույգ՝ 96-ից սկսած, աշխատել ենք «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Լինսի» ծրագրի, «Կարմիր խաչի» եւ այլոց հետ:

**- Ձեր կազմակերպությունն այսօր ունի համապատասխան նյութատեխնիկական բազա, եւ արդյո՞ք ձեր մասնագետ-կադրերը կարողանում են ժամանակի հետ քայլել: Թեպետ հասկանալի է, որ դա այնքան էլ հեշտ գործ չէ:**

- Ես կարծում եմ, որ մեր ընկերությունը մի կուռ կոլեկտիվ է, որն ունի իր աշխատանքային միջոցները, հստակեցված կադրային քաղաքականությունը, ինչը լիովին մեզ հնարավորություն է տալիս ազատ եւ ճշգրիտ կերպով մեր աշխատանքները կազմակերպել: Օգտվելով առիթից՝ կուզենայի նշել, որ մենք տեղակայված ենք ե՛ւ Երեւանում, ե՛ւ Գյումրիում:

**- Ներկա պահին Գյումրիում աշխատանքներ ընթանո՞ւմ են:**

Միաժամանակ մենք այնտեղ նույնպես աշխատում ենք, իսկ ներկա պահին Քույր Արուսյակի համար կառուցում ենք մարզապտղատահամերգային համալիր:

**- Շատ հետաքրքրական է, թե ինչպես Ձեզ հաջողվեց Երեւանում նույնպես շինարարական ակտիվ գործունեություն ծավալել: Գուցե ծանոթ-բարեկամնե՞րն էին պատճառը, թե՞...**

- Նախ նշեմ, որ սկիզբը դրվել է 2000-ից, երբ մենք բերդի հիվանդանոցի (հայտնի ցեքեհի) համար բաժանմունք կառուցեցինք, իսկ դրանից հետո (մրցույթով մենք շահեցինք) կառուցեցինք Շենգավիթի դատարանի շենքը, ներկա պահին էլ կառուցում ենք Կենտրոնական բանկի նոր մասնաշենքը:

**- Իսկ ինչպե՞ս է Ձեզ հաջողվում տենդերների ժամանակ, այսպես ասած, փաթեթ շահել:**

- Կարծում եմ, որ միակ երաշխիքը որակ ապահովելն է: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի մեջ ծանոթ-խնամի-բարեկամ ունենալուն, ապա ես ո՛չ մեկն ունեմ, ո՛չ մյուսը, պարզապես մեծ պատասխանատվությամբ ենք մոտենում մեր աշխատանքին ` քաջ գիտակցելով, որ ամեն մի շենք ու շինություն կառուցելիս մենք կենսագրություն ենք թողնում, իսկ այն պետք է այնպիսին լինի, որի համար միշտ գլուխդ բարձր պահես...

**Ն. ՍԱՀԱԿՅԱՆ**



# Եթե սարքի խափանումը հոսանքի տատանումից է, կվերանորոգվի անվճար

Վերջերս հաճախացել են հոսանքի անջատումներն ու տատանումները, որից շատ էլեկտրական սարքեր կամ խափանվում են, կամ սկսում են անկանոն աշխատել: Մի երկու շաբաթ առաջ, լուսադեմին, մեր թաղամասը հոսանքազրկվեց մի քանի ժամով (չեմ նշում հասցեն, քանզի դա եզակի դեպք չէ ու շատ թաղամասերում է լինում): Հետո, երբ հոսանք տվեցին, այնքան բարձր լարվածության էր, որ ջահի երկու լամպերը պայթեցին: Մինչեւ կհասցնեի ուշքի գալ ու պատկու փշուրները մաքրել, հոսանքի տատանումը շարունակվում էր: Մեկ միանում էր, մեր անջատվում ու այդպես մոտ 40 րոպե: Սառնարանը սկսեց տարօրինակ ձայներ հանել, անկանոն աշխատել, իսկ Soni Trinition հեռուստացույցի էկրանին տարբեր գծեր հայտնվեցին, իսկ ներքեւի մասում պատկերը ստացավ կանաչի ու մանուշակագույնի մոտ մի երանգ: Հեռուստացույցը մի քանի ժամ անջատված պահելուց հետո միացրի, նույն թերությունները կրկին երեւացին: Զայրացած զանգահարեցի «Հայկական էլցանց» ՓԲԸ ու փորձեցի պարզել, թե ինչո՞ւ է հոսանքը տատանվում, որի հետեւանքով ինձ մեծ վնաս են պատճառում: Եվ ահա, ա՜յ քեզ զարմանք, ինձ բացատրեցին, որ գնամ «ՀԷՑ» ՓԲԸ, որը գտնվում է Նորքում՝ Արմենակյան փողոցում, դիմում գրեմ ու հստակ նշեմ դեպքի օրն ու ժամը: Այդպես էլ արեցի: Ինձ դիմումի դիմաց տվեցին մի կտրոն, որտեղ նշված էր դիմումի հերթական համարը՝ 904, հեռախոսահամարները՝ 65-16-64, 59-12-22, ու ասացին՝ մենք կստուգենք ձեր տեղամասը սպասարկող հենակետից ու ձեզ կտեղեկացնենք մեկ շաբաթվա ընթացքում: Մի քանի օրից հետո ինձ զանգահարեց էլցանցի հյուսիսային մասնաճյուղի գլխ. ճարտարագետի տեղակալ Կարեն Մարինյանը եւ տեղեկացրեց, որ գնամ Քոչարի փողոցում գտնվող էլցանցի գրասենյակ, լրացնեմ հատուկ դիմումի բլանկն ու ներկայացնեմ վերանորոգման արհեստանոց: Զարմանալի էր, որ բոլոր այն գրասենյակները, որտեղ ինձ ուղարկում էին, աշխատողները շատ բարեհամբույր էին ու ամեն կերպ աշխատում էին առանց ձգձգելու եւ առանց քաշքշուկների արագ ընթացք տալ դիմումիս:

Երբ հարցրի, թե նման կերպ բոլոր բաժանորդների հե՞տ են վարվում, եղավ պատասխան. «Պարտավոր ենք մեր բաժանորդներին սպասարկել քաղաքակիրթ ձեւով»: Նույն հարգալից վերաբերմունքին արժանանացա նաեւ «Հրայր» ՍՊԸ վերանորոգման արհեստանոցում թե՛ տնօրենության եւ թե՛ երկու վարպետ-մասնագետների կողմից, որոնք եկան, առաջացած թերությունները վերացրին անվճար: Մի պահ ինձ թվաց, թե ես այլ երկրում եմ ապրում, իսկ հետո ոգեւորված՝ կատարվածի մասին սկսեցի տեղեկացնել նաեւ իմ հարեւաններին, որ նրանք էլ վստահեն ու դիմեն: Պարզապես պետք է ուշադիր լինել, ու հենց հոսանքը կանջատվի, արագ բոլոր էլեկտրական սարքերը անջատել:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Բելառուսը կնախագահի ՀԱՊԿ-ում ու կմիանա հավաքական ուժերին

## *Ուզբեկստանը մտածում է իր տարածքում ԱՄՆ ռազմական ավիաբազայի վերականգնմա՞ն մասին*

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) նախագահությունը ստանձնելու եւ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերին (ՕԱՀՈւ) միանալու մասին:

ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները դեռեւս փետրվարին որոշել էին ստեղծել օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր: Դրանց ստեղծման համաձայնագիրը եւ կից փաստաթղթերը, որոնք սահմանում են այդ ուժերի կարգավիճակը, ձեւավորման ու գործունեության կարգը, կիրառության կանոնները, հավաքական ուժերի կազմը, ստորագրվել են մայիսի 14-ին Մոսկվայում:

ՀԱՊԿ գագաթաժողովում կազմակերպության անդամ 7 երկրներից երկուսը՝ Բելառուսը եւ Ուզբեկստանը, չստորագրեցին համաձայնագիրը: Բացի այդ, Հայաստանը մայիսին ՀԱՊԿ-ում նախագահությունը պետք է փոխանցեր Բելառուսին, սակայն քանի որ Բելառուսի նախագահը Մոսկվա չէր ժամանել, նախագահությունը ժամանակավորապես ստանձնել է Ռուսաստանը:

Բելառուսի պատվիրակության բացակայությունը բացատրվում էր Ռուսաստան-Բելառուս «կաթնամթերքային» հարաբերությունների վատացմամբ: Ռուսաստանը էմբարգո էր հայտարարել բելառուսական կաթնամթերքի համար՝ ընդունված չափանիշներին չհամապատասխանելու հիմքով:

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն էլ ոչ միայն չէր մեկնել Մոսկվա, այլեւ հատուկ հայտարարություն էր տարածել՝ նշելով, թե հավաքական անվտանգություն չի կարելի կառուցել՝ առանց հաշվի առնելու անդամ պետության տնտեսական շահերը: Ավելին, ըստ Բելառուսի, որեւէ երկրի բացակայությամբ ստորագրված նյութերը ՀԱՊԿ փաստաթղթեր չեն:

Այն ժամանակ դեռեւս Ռուսաստանի նախագահը համոզվածություն հայտնեց, թե Բելառուսը որոշ ժամանակ անց կմիանա համաձայնագրին ճիշտ այնպես, ինչպես կմիանա այդ համաձայնագիրը չստորագրած Ուզբեկստանը, որը «մտածելու հարցեր» ուներ:

Հինգշաբթի՝ օգոստոսի 27-ին, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ Սոչիում կայացած հանդիպումից հետո Բելառուսի նախագահն ընդգծել է, որ բելառուս փորձագետները բավականին ակտիվ էին մասնակցել ՕԱՀՈւ-ի առնչությամբ հարցերի քննարկմանն ու այդ իսկ պատճառով Բելառուսը չի կարող չընդունել այդ փաստաթուղթը: «Մենք շատ ներդրում ունենք ՕԱՀՈւ պայմանագրի բովանդակության, էության առումով: Բացի այդ, այն շրջանակային է, վախենալու բացարձակապես ոչինչ չկա», հայտարարել է Լուկաշենկոն:

ՀԱՊԿ շրջանակներում եւս մեկ հարց էր մնում Բելառուսի նախագահությանը, որ պետք է Բելառուսը ստանձներ Հայաստանից ամիսներ առաջ: «Ինչո՞ւ հրաժարվել, եթե քեզ նման պատվավոր առաքելություն են առաջարկում», ՀԱՊԿ նախագահության ստանձնման առնչությամբ նշել է Լուկաշենկոն: Բելառուսի նախագահն ավելացրել է. «Կես տարի մենք չենք աշխատել որպես նախագահող, դրա համար մենք պարտավորություն ենք ստանձնել նախագահելու նաեւ հաջորդ ժամկետում»:

Ինչ վերաբերում է Ուզբեկստանին, ապա մոտ մեկ շաբաթ առաջ, «Կոմերսանտի» աղբյուրների համաձայն, տարածվեց, թե Ուզբեկստանը չի պատրաստվում ստորագրել ՕԱՀՈւ-ի համաձայնագիրը եւ ընդհանրապես նվազագույնի է հասցրել ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունը: Բացի այդ, ըստ «Կոմերսանտի», Տաշքենդը բանակցություններ է նախաձեռնել Վաշինգտոնի հետ ԱՄՆ ռազմական բազայի հնարավոր վերադարձի առնչությամբ:

Նման տեղեկությունների տարածման համար թերեւս հիմք է ծառայել այն հանգամանքը, որ օգոստոսի առաջին կեսին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը ընդունել է ԱՄՆ զինված ուժերի կոորդինացման կենտրոնական շտաբի ղեկավար Դեւիդ Պետրեուսին՝ քննարկելու «ուզբեկ-ամերիկյան հարաբերությունների հեռանկարները եւ համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր»:

Որոշ տեղեկությունների համաձայն, Քարիմովը Պետրեուսի հետ հանդիպմանն անդրադարձել է նաեւ Ուզբեկստանում ԱՄՆ ավիաբազայի վերականգնման հնարավորությանը, որ գործել է «Խանաբադ» աերոդրոմում եւ փակվել 2005-ին: Մինչ այդ էլ տարբեր լրատվամիջոցներով տարածվում էր, թե ԱՄՆ-ը ցանկանում է նախաձեռնել Ուզբեկստանում ավիաբազայի վերականգնման հնարավորության քննարկումը՝ դեպի Աֆղանստան այլընտրանքային տարանցիկ ուղի ունենալու համար այն դեպքում, երբ փակվեց ամերիկյան ավիաբազան Կիրգիզիայում: Այս տեղեկությունը, սակայն, հերքել էր ԱՄՆ-ը:

«Կոմերսանտն» այս տեղեկություններին ավելացրել է նաեւ իր աղբյուրների խոսքերը, որ Կիրգիզիայում ռուսական բազաների բացման մասին Ռուսաստանի հայտարարություններից հետո ուզբեկական իշխանությունները մտահոգվել են տարածաշրջանում ուժերի հավասարակշռության ապահովման հարցով, նկատի ունենալով Բիշքեկի հետ ոչ նորմալ հարաբերությունները:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

# Մահափորձ սաուդցի արքայազնի դեմ

**Սաուդյան Արաբիայի արքայազն Մուհամմեդ բին Նայեֆի դեմ երեկ մահափորձ է կազմակերպվել մի մահապարտ ահաբեկչի կողմից: Նախնական տեղեկությունների համաձայն, արքայազնը միայն թեթեւ վերքեր է ստացել:**

**Տեղական լրատվամիջոցների տվյալներով, մահապարտ ահաբեկիչը եղել է այն անձանց մեջ, ովքեր եկել էին արքայազնին շնորհավորելու մահմեդականների սրբազան ամսվա՝ Ռամադանի սկսվելու առթիվ: Հայտնվելով արքայազնի կողքին, ահաբեկիչը գործի է դրել պայթուցիկ սարքը, բայց բին Նայեֆը քիչ է տուժել:**

**Լրատվամիջոցներից շատերը մահափորձը կապում են արքայազնի մասնագիտական գործունեության հետ: Նա ներքգործնախարարի օգնականն է եւ հայտնի է գրոհայինների հանդեպ իր կոշտ դիրքորոշմամբ, տնօրինում է հակաահաբեկչական գործունեության հարցերը:**

**Չորս տարի առաջ Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր Ռիադում անհայտ անձինք մահափորձ էին կատարել արքայազնի հոր՝ ներքգործնախարար իշխան Նայեֆ բին Աբդուլ Ազիզի դեմ: Նախարարը չէր տուժել, ահաբեկիչներին ոչնչացրել էին հատուկ ծառայությունների աշխատակիցները: Հարձակման պատասխանատվությունն ստանձնել էր «Ալ Ղաիդայի» սաուդյան մասնաճյուղը:**

# Սոմալեցի ծովահեններն ամերիկյան ուղղաթիռ են գնդակոծել

**Սոմալեցի ծովահեններն իրենց առեւանգած թայվանյան ձկնորսանավից գնդակոծել են ԱՄՆ ծովուժի մի ուղղաթիռ: Այդ մասին հաղորդում է The Economic Times թերթը:**

**Ծովուժի կենտրոնական հրամանատարությունում թերթի թղթակցին հայտնել են, որ օգոստոսի 26-ին, երբ SH-60B ուղղաթիռը Սոմալիի ափերի մոտ շրջաթռիչք է կատարել առեւանգված Win Far նավի վրա, ծովահենները նավից ուղղաթիռի վրա մի քանի անգամ կրակ են բացել խոշոր տրամաչափի զենքից: Ամերիկացի զինծառայողները չեն տուժել:**

**Գնդակոծման բուն փաստը հայտնի է դարձել, երբ ուղղաթիռը վերադարձել է «Չենսելորսվիլ» ռազմանավ, եւ զինվորականները դիտել են թռիչքի ընթացքում կատարված տեսագրությունը: 2009-ի գարնանն առեւանգված Win Far ձկնորսանավը վերջին 4,5 ամիսներին ծովահեններն օգտագործել են ուրիշ նավերի վրա զինված հարձակումներ կատարելու համար: Այդ ձկնորսանավով ծովահենների իրականացրած ամենաաղմկալի գործողությունը ապրիլին ամերիկյան Maersk Alabama կոնտեյներատար նավի վրա ձեռնարկված հարձակումն է: Հաղորդվում է, որ ծովահենները պատանդ են պահում Win Far-ի անձնակազմի երեք տասնյակ անդամների:**

# Երուսաղեմյան ոդիսական: Վերադարձ

## *Մաս երրորդ*

***Շարունակում ենք թարգմանաբար ներկայացնել Արթուր Հակոբյանի երուսաղեմյան տպավորությունները: Ստորեւ հատվածներ շարքի երրորդ մասից: Առաջին եւ երկրորդ մասերի համար թերթել «Ազգի» օգոստոսի 20-ի եւ 21-ի համարները:***

**Ամառային տաք եղանակին Երուսաղեմի հին քաղաքի սալաքարերով պատված նեղ փողոցներով քայլելը վերագտնված երջանկություն կարելի է համարել, որից զրկված ենք Սիդնեյում: Այնտեղ ոտքերը ծառայում են ավտոմեքենան արգելակելուն կամ արագացնելուն: Ես հավատում եմ ընկերներիս, երբ ասում են, որ քաշ են կորցրել՝ թափառելով հին քաղաքում:**

**Ես մի երկար ցուցակ ունեմ այն մարդկանց, որոնց հույս ունեմ հանդիպելու այստեղ: Նաեւ այն վայրերի, որոնք հիշատակներ են արթնացնում իմ մեջ: Ցանկանում եմ աշխատանքս զուգակցել հաճույքի հետ: Մխիթարական է, որ փոքրամասնություն կազմող համայնքների սյուները դեռ կանգուն են: Անորոշություններն ու մտահոգությունները խոր հետքեր չեն թողել բարեբախտաբար: Բայց կան նաեւ անխուսափելիորեն թոշնածներ: Երուսաղեմցիները կարծես շտապողականության հորձանուտն են ընկել: Նրանք գիտակցում են, որ ժամանակը չի սպասում, եւ պետք է ձեռք բերել ինչքան կարելի է շատ եւ արագ:**

**Գեւորգ Հինդոյանը՝ Հայոց պատրիարքարանի նախկին աշխատակիցը, որի գիտելիքները Երուսաղեմի մասին հանրագիտարանային կարելի է համարել, վերջերս է վերադարձել Կանադայից, որտեղ հանդես է եկել բանախոսություններով:**

**«Ինչքա՞ն ժամանակով ես եկել: Մենք քո կարիքն ունենք այստեղ», ասում է ինձ: Մի ժամանակ մենք միասին ենք աշխատել պատրիարքարանում: Պատասխանս նրան չի գոհացնում, իսկ ես կյանքս չեմ պատկերացնում Սիդնեյում ապրող իմ թոռներից հեռու:**

**Գեւորգն իր գիտելիքները Սուրբ երկրում հայերի գոյության մասին ամփոփել է 70-էջանոց մի գրքույկում: Ապրում է Սուրբ Հակոբի վանքում, մի քանի մետր այն կողմ Բիր Զեյթի պաղեստինյան համալսարանի դասախոս եւ հասարակական հարաբերությունների բաժնի տնօրեն, դոկտ. Ալբերտ Աղազարյանի տնից: Երկուսն էլ փնտրված մասնագետներ են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային գիտնականների կողմից:**

**Մյուս երեւելիների թվում է Եղիա Տիգրանյանը, որն արդեն թոշակի է անցել ծխական դպրոցի փոխտնօրենի իր պաշտոնից: Բայց նկարիչ Աբգար Հակոբյանը շարունակում է ստեղծագործել: Սանդրունի եղբայրները կարողացել են իրենց տեղն զբաղեցնել կերամիկայի չափազանց մրցունակ շուկայում, իսկ Բիր Զեյթ համալսարանում գործարարության բաժնի նախկին տնօրեն Սարո Նազգաշյանն իր սեփական խորհրդատվական գրասենյակն է բացել: Նրա ընկերը՝ Րաֆֆի Սաֆիեն, որ պատրիարքարանի տեսալողական ապարատների պատասխանատուն էր Սարոյի հետ, շարունակում է հոր՝ Հաննայի լուսանկարչական գործունեությունը:**

**Իսկ նրանց երեխանե՞րը: Ճիշտ է, 15 տարի հետո դժվար թե ճանաչեի նրանց, բայց ստացածս պատասխանները մտահոգիչ են: Սրնգահարի քաղցր մեղեդին «հանձնել-տարել» է խիզախություններ մարմնավորող երիտասարդությանը:**

**«Երկու զավակներս էլ այստեղ չեն: Որդիս ամուսնացավ երուսաղեմցի մի աղջկա հետ եւ տեղափոխվեց Մ. Նահանգներ: Դուստրս նույնպես այնտեղ է աշխատում», պատմում է Տիգրանյանը: Աղազարյանի դուստրը մեկնել է Շվեդիա՝ ամուսնանալու:**

**«Որդիս ուսանում է Ամերիկայում», ասում է մի երրորդը:**

**Գործարար դարձած նախկին կավագործ Հակոբ Անդրեասյանն իր զավակներին տվել է մեկնել-չմեկնելու միջեւ ընտրություն կատարելու իրավունքը, բայց ինքն ու կինը «տեղից շարժվելու» նպատակ չունեն:**

**Հայկական թաղամասի փողոցները խանձվում են արեւի տակ: Բայց լռությունն ամենուրեք զգաստացնող է: Ծիծաղի ձայներ չկան: Չարաճճի երեխաներին ուղղված հանդիմանություններ չեն լսվում: Նույնիսկ երաժշտություն չկա: Թաղամասը նմանվում է սյուրռեալիստական ուրվական մի վայրի: Միայն հիշողություններն են մնացել: Հայերի թիվը Երուսաղեմում 1948-ի արաբ-իսրայելական պատերազմի նախօրեին ավելի քան 15 հազար էր: Այսօր ընդամենը՝ հազար: Քրիստոնյաների ընդհանուր թիվը 12 հազար է, նախկին թվի կեսը: Հակառակ նրանց միջեւ եղած տարբերություններին, քրիստոնեական համայնքները միեւնույն մտահոգություններն ունեն: Հայերն ու հույները երբեմն վիճում են միմյանց հետ որպես օսմանյան ժառանգություն մնացած «կարգավիճակի մեկնաբանման» հարցի շուրջը: Բայց նրանք միասնական են արտաքին վտանգի ներկայության դեպքում :**



*Հին քաղաքի փողոցներից մեկը:*

**Միասնականության հանգերգը լսում եմ հույն պատրիարք Թեոֆիլոս III-ից, երբ այցելության եմ գնում նրան:**

**«Մենք պետք է միավորվենք», շեշտում է նա: Տարբեր եկեղեցիների առաջնորդներ վստահեցնում են ինձ, որ ինչ էլ լինի, նույնիսկ եթե իրենց համապատասխան համայնքներում մի հոգի էլ չմնա, եկեղեցիները կանգուն են մնալու:**

**«Ամեն ինչ անցողիկ է, եկեղեցին՝ մնայուն», հավաստիացնում է ինձ դոկտ. Ջոն Թլիլը՝ թոշակառու ատամնաբույժն ու հունական համայնքի առաջնորդը: Նա ինձ կարդում է միջհարանվանական հավաքույթի ժամանակ իր բանախոսությունից մի հատված. «Հանգամանքներն ինչպիսին էլ լինեն, մենք ենք լինելու պատմության «երաշխավորները»: Մարդիկ գալիս են, գնում, իսկ մենք մնում ենք: Մենք այժմ մեջտեղում ենք գտնվում, որովհետեւ մեզնից առաջ եղել են եւ էլ կլինեն՝ մեզնից հետո: Մենք պարտավոր ենք գիտակցել դա եւ հպարտանալ դրանով: Մենք մեծ առաքելություն ունենք, եւ դա մեր պատասխանատվությունը կրկնապատկում է»: «Պատմաբաններ շատ կան, բայց պատմությունը մեկն է», ավելացնում է նա:**

**Ոչ քրիստոնյաների հետ հարաբերություններում եկեղեցիները չեն ցանկանում «ալեկոծություններ» առաջացնել: «Մեզ վիճակված է միասին ապրել», նշում է Թլիլը, ով հենց նոր մի հաստ հատոր է հրատարակել՝ «Ես Երուսաղեմն եմ» խորագրով:**

**Բայց Երուսաղեմը միայն արաբներինը, հրեաներինը, քրիստոնյաներինը կամ մահմեդականներինը չէ: Երուսաղեմն աշխարհինն է, եւ աշխարհը պարտավոր է հոգ տանել, որ հոգեւորականության այդ օրրանը մնա եւ հարատեւի որպես սրբազան վայր: Դոկտ. Թլիլն ինձ ասում է, որ երուսաղեմցին պետք է «լինի մի փոքր ամեն ինչից»՝ մի քիչ արաբ, մի քիչ հույն, հայ, ուղղափառ, քրիստոնյա, մահմեդական եւ այլն:**

**Շարունակում եմ քայլել: Անցնում եմ «Հռոմեական Քարդո» կոչված թաղամասով եւ մտնում համեմունքների շուկան ու այնտեղ դեմ առ դեմ գալիս համարյա մոռացված մի ուսուցչապետի՝ Աբու Ահմեդին (իսկական անունը չի ցանկանում նշել), որը գլխի շարժումով բարեւելով ինձ՝ հարցնում է. «Վերադարձե՞լ ես»:**

**«Ո՛չ երկար ժամանակով», պատասխանում եմ:**

**Գլուխն օրորում է: Մենք զրուցում ենք, եւ ես դասեր եմ քաղում այդ զրույցներից, անմոռանալի դասեր: «Երբ ցավի, դժբախտության կամ դժվարությունների ես հանդիպում կյանքում, դու պետք է մտովի տեղափոխվես բոլորովին այլ մի աշխարհ, որտեղ խաղաղություն է, երջանկություն եւ հանգստություն: Երբ ծանրություն ես զգում ուսիդ վրա, մի գիրք վերցրու, ոտքերդ դիր սեղանի վրա եւ սկսիր կարդալ կամ հեռուստացույցով մի հետաքրքրական ծրագիր դիտիր: Եվ ցավդ կմոռանաս: Եթե դարձյալ հայտնվի (ցավը), սկսիր սկզբից»:**

Թարգմանեց Հ. Ծ.

## Կինո

# «Ուրիշ ոչ մի տեղ, բացի Հայաստանից»

***«Ազգը» քանիցս տեղեկացրել է, որ Նյու Յորքում ապրող ամերիկացի ռեժիսոր Բրեյդն Քինգը ֆիլմ է նկարահանում Հայաստանի մասին: «Այստեղ» (Here) խորագրով ֆիլմը կարճասեւ, բայց ռոմանտիկ բուռն հարաբերությունների մասին է, որ սկիզբ են առնում մի ամերիկացու (արբանյակային քարտեզագիր-ինժեներ) եւ սփյուռքում ապրող հայուհու (լուսանկարիչ-արվեստաբան) միջեւ, երբ նրանք որոշում են «ճանապարհորդել դեպի բառացի եւ փոխաբերական իմաստներով չհայտնագործված մի երկիր»: Թարգմանաբար ներկայացնում ենք «ԱՄՆ հայկական կյանք» (USA Armenian Life) ամսագրի հրատարակիչ եւ խմբագիր Ափո Չափարյանի հարցազրույցը ֆիլմի ռեժիսոր Քինգի հետ:***

**- Ինչո՞ւ է ֆիլմը վերնագրված «Այստեղ»:**

- Ֆիլմի գործողությունների ընթացքը պատկերացնելիս տեսնում էի ճանապարհորդության ընթացքում զգացմունքների արթնացման պահեր, որն ինձ հետ հաճախ է պատել Մ.Նահանգներում կամ տարբեր երկրներում ավտոմեքենայով շրջագայելիս: Ֆիլմը երկրից երկիր ուղեւորությունների մի փոքր հատված է, իսկ «Այստեղ» վերնագիրը սկզբից եւեթ շատ հարմար թվաց ինձ, քանի որ ֆիլմը կոնկրետ տեղանքի, մշակույթի, աշխարհաքաղաքական զարգացումների մասին է: Դա ամբողջացնում է այն, ինչը փորձում եմ անել: Սկզբում որեւէ իմաստ չէի վերագրում դրան: Տարիներ առաջ, նախքան նույնիսկ ֆիլմի գաղափարը հղանալը, երբ մի քանի երաժիշտների հետ Չիկագոյում ապրում էի մի շենքի ընդարձակ վերնահարկում, մի օր վեր կացա եւ մի մեծ պատի վրա սեւ տառերով գրեցի «HERE» (այստեղ) բառը: Դա այն էր, ինչ պետք է անեի որոնելու, գտնելու, բացահայտելու համար: Հենց դա պետք է լիներ իմ հաջորդ ճանապարհորդության սկիզբը:

**- Ձեր ինժեներ հերոսը շատ երկրներում է եղել: Ինչո՞ւ հատկապես Հայաստանը ընտրեցիք:**

- Արդեն ասացի, որ ֆիլմիս համար որոնում էի ամենահարմար վայրը, բնությունը, մշակույթը, միջավայրը: Սկզբում մտածում էի Հյուսիսային Աֆրիկայի, օրինակ, Մարոկոյի մասին, հետո հեռավոր արեւելյան «ստանով» վերջացող երկրների մասին, որտեղ բնական ռեսուրսներ հայտնաբերելու նպատակով տարբեր տեսակի ծրագրեր են գործի դրվում: Վերջապես կանգ առա Հայաստանի վրա: Գաղափարը ինձ հուշեց Տորոնտոյում ապրող մի կին արվեստագետ, որի հետ քննարկում էինք իմ ապագա սցենարը: Սկզբում շատ կարեւորություն չտվեցի նրա առաջարկին, բայց հետզհետե, որոշ ուսումնասիրությունների արդյունքում սկսեց ուրվագծվել Հայաստանի պատկերը, նրա խորհրդանիշ Արարատ լեռը, որ գտնվում է երկրի սահմաններից այն կողմ: Թեմատիկայի առումով դա ինձ բավականին հետաքրքրեց: Հետո, երբ 2004-ին այցելեցի Հայաստան, ամեն ինչ ավելի հստակ դարձավ: Ուրիշ ոչ մի տեղ Արեւելքն ու Արեւմուտքն այնքան սերտորեն միախառնված չեն, որքան Հայաստանում: Փոքր տարածք եւ հարուստ բնություն: Դա հրաշալի է: Հնագույն պատմությունը, նորի ձգտումը, հարյուրավոր վերամբարձ կռունկների առկայությունը, շինարարության թափը եւ նորագույն տեխնիկայի կիրառումը տարբեր ոլորտներում, այդ բոլորը մտան սցենարի մեջ եւ թույլ տվեցին ավարտել պատմությունը: Դա ապշեցնող փորձառություն էր:

**- Իսկ ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք:**

- Կինեմատոգրաֆիական փոքր հնարավորություններ ունեցող երկրում արեւմտյան ոճի ֆիլմ արտադրելը գործնականում, իրոք, դժվար է. բայց դրանք այնքան լուրջ չէին, որ մտածեի մեկ այլ երկրում նկարահանելու մասին: Կարծում եմ, Հայաստանը միջազգային կինոարտադրության կենտրոն դառնալու հնարավորություններ ունի եւ հույս ունեմ, որ «Այստեղ» ֆիլմը կլինի իմ փոքր ներդրումը այդ հնարավորություններից գոնե մեկը իրականություն դարձնելու:

Հայաստանը աշխարհին տալու շատ բան ունի, հետեւաբար իմ պատմության հերոսը միայն այնտեղ կարող էր գործել:

**- Ի՞նչ եք կարծում, ի՞նչպիսի զգացմունքներ կարթնացնի ֆիլմը, ի՞նչ կզգա հանդիսատեսը ֆիլմը դիտելուց հետո:**



**Ձախից աջ՝ Ժան Էսքիյան (լրագրող), Բրեյդին Քինգ (ռեժիսոր), Ջեֆ Գալստյան (գործադիր պրոդյուսեր), Ափո Չափարյան («ԱՄՆ Հայկական կյանք» ամսագրի խմբագիր)**

- Դժվար հարց է, որին չէի ցանկանա պատասխանել: Ամենակախարդական բանը, որ մարդու հոգում կարող է տեղի ունենալ որեւէ ֆիլմ դիտելուց կամ թանգարան այցելելուց հետո, այն զգացողությունն է, որ աշխարհը մի փոքր փոխվել է: Այս ծրագրի վրա աշխատելիս, ինձ զարմանալիորեն ուրախացնում էր այն փաստը, որ «Սանդանս» ստուդիայի լաբորատորիաներում կամ այլուր աշխատող իմ գործընկերները չափազանց ոգեւորված էին եւ ցանկանում էին ինտերնետի միջոցով շատ բան իմանալ Հայաստանի, նրա մշակույթի, պատմության եւ բնաշխարհի մասին: Ես արդեն 9 անգամ եղել եմ այնտեղ եւ ամեն անգամ մի նոր բան եմ հայտնաբերել: Ուրիշներին նույն վիճակում տեսնելն ուղղակի ոգեւորում է ինձ ու վստահություն ներշնչում:

**- Ինչո՞վ է ձեր պատմությունը տարբերվում միջմշակութային այլ թեմաներից:**

- Լավ հարց է, որի պատասխանը պետք է փնտրել այն պատճառների մեջ, թե ինչո՞ւ Հայաստանը դարձավ ամենահարմար վայրը իմ պատմության համար: Սցենարում ունենք նաեւ մի ամերիկացի երիտասարդ, որն արբանյակային քարտեզագիր լինելով, առնչվում է այնտեղի մշակույթների հետ, որոնցից գլուխ չի հանում, թեեւ կարողանում է որոշ չափով սահմանումներ տալ: Մյուս կողմից, ունենք հարուստ պատմություն ունեցող եւ տարբեր մշակույթների ազդեցությունը կրած մի երիտասարդ կին, որը ճակատագրի բերումով մեկնում է Կանադա, հետո անցնում Եվրոպա՝ նոր կյանք սկսելու: Ինչպե՞ս է նա հարմարվելու իր հայրենիքում այդքան բազում փորձություններից եւ այլ մշակույթների հետ շփումներից հետո: Ի՞նչ զգացումներ են ունենում նրա նման մարդիկ, ի՞նչ վարքագիծ են դրսեւորում: Այլոց հետ հարաբերությունները նրանց թույլ են տալիս այլ աչքերով նայել, այլ տեսանկյունից դիտարկել սեփական անձը: Հենց սա էլ յուրահատուկ է դարձնում նրանց պատմությունը: Մեկը դրսում է ապրել (եւ ապրում է), բայց կապվածություն է զգում իր հողի հետ, մյուսը զերծ է այդ կապվածությունից, բայց զգում է դրա կարիքը: Միասին նրանք կարողանում են որոշ չափով փոխել մեկմեկու:

**- Ասացիք, որ առաջին անգամ 2004-ին եք այցելել Հայաստան, հիացել եք մշակույթով, իսկ ի՞նչ կասեիք ժողովրդի մասին: Ի՞նչ բնորոշ գծեր հայտնաբերեցիք հայերի մեջ:**

- Ո՜հ, մենք ամբողջ մի օր կարող ենք խոսել այդ մասին: Հայաստանում իմ փորձառությունը մի հրաշալի պարգեւ էր ոչ միայն մշակույթը ճանաչելու, այլեւ բնաշխարհով հիանալու եւ հրաշալի մարդկանց հետ նորանոր շփումներ ունենալու առումներով: Ես ինձ պաշտպանված էի զգում նրանց հետ, որովհետեւ նրանք ինձ հասկանում էին եւ ցանկանում էին նեցուկ կանգնել ինձ: Հիմա էլ եմ նույնը զգում: Երկրի ու մարդկանց որտաբացությունը, հյուրասիրությունն ու ձեռք մեկնելու պատրաստակամությունն օգնեցին ավարտին հասցնել ծրագիրս: Առանց Հայաստանի եւ հայաստանցիների դա անկարելի կլիներ:

Ես հասկացա, որ Հայաստանը շատ բան ունի աշխարհին տալու, անասելի շատ հնարավորություններ: Նույնիսկ առաջին այցելության ժամանակ այնքան բան կար նկարահանելու, որ մտածում էի, թե հարյուր ֆիլմ կարելի է ստեղծել Հայաստանում: Հետո հասկացա, որ իմ ֆիլմը կարող է լինել դրանցից մեկը միայն, մնացածը պետք է անեն ուրիշները, այդ թվում՝ Հայաստանի երիտասարդ կինոգործիչները: Այդ նպատակով էլ ֆիլմի շահույթի 5 տոկոսը որոշել եմ նվիրել նրանց՝ հայաստանցի երիտասարդ կինոգործիչներին:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

## ԿԻՆՈԱՇԽԱՐՀ

# Սան-Սեբաստիանի կինոփառատոնը կբացվի Ատոմ Էգոյանի ֆիլմով

**Սան-Սեբաստիանի 57 -րդ կինոփառատոնի (սեպտեմբերի 18-26) մրցութային ծրագիրը կբացվի կանադահայ կինոբեմադրիչ Ատոմ Էգոյանի նոր՝ «Քլոե» ֆիլմի ցուցադրությամբ: Ժամանակակից կինոարվեստի մեծահամբավ նորարարներից մեկը համարվող Էգոյանի այս ֆիլմի գլխավոր դերերում հանդես են գալիս Լայամ Նիսոնը, Ջուլիանա Մուրը եւ Ամանդա Սեյֆրեյդը:**



«Քլոե»

**Այս տարի փառատոնի ոսկե մրցանակի համար կպայքարեն ֆրանսիացի երեք ռեժիսորների ֆիլմերը. Կաննի կինոփառատոնի Գրան պրի մրցանակակիր Բրունո Դյումոնը կներկայացնի իր նոր՝ «Hadewijch» ֆիլմը: Ֆրանսուա Օզոնը, որը Սան Սեբաստիանի կինոփառատոնի մրցութային ծրագրում վերջին անգամ մասնակցել էր իր «Ավազի տակ» ֆիլմով, այս անգամ կցուցադրի «Փախստականը» ֆիլմը: Իր «La belle personne» ֆիլմի անցած տարվա հաղթանակից հետո Քրիստոֆ Օնորը կցուցադրի իր նոր՝ «Ծրագրեր Լենայի համար» ֆիլմը:**

**Գերմանիայից կմասնակցեն Մաթիաս Գլասները՝ «Դա սեր է» ֆիլմով եւ լավագույն կարճամետրաժ ֆիլմի համար «Օսկարի» արժանացած Աարոն Շնայդերն՝ իր առաջին լիամետրաժ ֆիլմով: Թուրքական կինոն կներկայացնի կին կինոբեմադրիչ Փելին Էսմերը, որն իր «Խաղը» դեբյուտից հետո առաջին անգամ կինոփառատոնին կմասնակցի «Տասից տասնմեկ» (Թուրքիա, Ֆրանսիա, Գերմանիա) համատեղ արտադրության ֆիլմով: Իսպանական կինոն կներկայացնի Ֆերնանդա Թրուեբան, արգենտինականը՝ Խուան Խոսե Կամպանելլան, ավստրալիականը՝ Աննա Կոկինոսը, կորեականը՝ Ջժոն Սու-իլը, իրանականը՝ Մոհմադ Ռասուլոֆը, չինականը՝ Լյու Չուանը:**

**Փառատոնը կփակվի արդի կինոարվեստի տաղանդավոր դեմքերից Ռոդրիգո Գարսիայի «Մայրը եւ երեխան» ֆիլմի ցուցադրությամբ:**

# Վենետիկի բիենալեում ընդգրկվել է եւս 4 ֆիլմ

**Փառատոնի կազմակերպիչները պաշտոնական ծրագրում ընդգրկել են նաեւ նյույորքաբնակ հույն կինոբեմադրիչ Անջելա Իսմայիլոսի «Մեծ կինոբեմադրիչներ» ֆիլմը, որը պատմում է ժամանակակից կինոյում հայտնի տասը դեմքերի մասին, որոնց թվում են Թոդ Հայնսը, Ռիչարդ Լայնքլեյթերը, Ջոն Սեյլսը եւ ուրիշներ:**



**Հաջորդ ֆիլմը իրանցի 21-ամյա ռեժիսոր Խանա Մախմալբաֆի «Կանաչ օրեր» ֆիլմն է՝ նվիրված Իրանի քաղաքական անցուդարձին: Ի դեպ, Խանան մեծ ճանաչում ունեցող Մախմալբաֆ կինեմատոգրաֆիստների ընտանիքի ամենակրտսեր անդամն է: Մյուս երկու ֆիլմերից մեկի հեղինակը Ջո Դանտեն է, մյուսը՝ Փիթեր Գրինուեը: Առաջինի ֆիլմը պատմում է անցած դարի 50-60-ականների ամերիկյան կինոյի մասին, իսկ երկրորդինը՝ իտալացի գեղանկարիչ Պաոլո Վերոնեզեյի հայտնի կտավներից մեկի մասին:**

# Չինական բեստսելլերը կէկրանավորի ֆրանսիացի կինոբեմադրիչը

Ֆրանսիացի կինոբեմադրիչ Ժան-Ժակ Աննոն պատրաստվում է էկրանավորել չինացի գրող Ցզյան Ռոնգի «Գայլային տոտեմ» բեստսելլերը: Այժմ նա Չինաստանում է՝ գրքի հեղինակի հետ նկարահանումների համար անհրաժեշտ բնապատկերներ ընտրելու համար: Ֆիլմը ֆրանսիացի կինոբեմադրիչին առիթ է տվել առաջին անգամ այցելելու Չինաստան:



Ցզյան Ռոնգի վեպը 2007 թվականին արժանացել է «Բուքեր» մրցանակին համարժեք ասիական մրցանակի, որի շնորհիվ 60-ամյա հեղինակը՝ թոշակառու դասախոսը, դարձել է Չինաստանում բարձր եկամուտ ունեցող գրողներից մեկը: Չինաստանում վաճառվել է 2,5 մլն օրինակ, եւս 17 մլն՝ «պիրատական» ճանապարհով: Վեպում գործողությունները տեղի են ունենում անցած դարի 60-ականներին, չին-մոնղոլական սահմանի վրա, որտեղ ավանդապահ տեղացիները ըմբոստանում են իրենց շուրջը հայտնվող մոդեռնիստների դեմ: Ժան-Ժակ Աննոն ֆիլմը կնկարահանի չինական պետական «Պեկինյան արգելված քաղաք» կորպորացիայի պատվերով:

**Պատրաստեց**
**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ**

# Մխիթարյանի գոլը չօգնեց «Մետալուրգին»

Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի բոլոր մասնակիցները: Նրանցից 38-ը որոշվեցին Եվրոպայի լիգայի որակավորման 4-րդ փուլի պատասխան հանդիպումներից հետո: Եվս 10 թիմեր խմբային մրցաշարում ընդգրկվեցին չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի հանդիպումներում պարտվելուց հետո:

Խմբային մրցաշարի 48 ակումբներից միայն 4-ն են ներկայացնում նախկին ԽՍՀՄ հանրապետությունները: Դոնեցկի «Շախտյորն» ու բելառուսական ԲԱՏԷ-ն ուղեգիր նվաճեցին Եվրոպայի լիգայի որակավորման 4-րդ փուլի արգելքը հաղթահարելու շնորհիվ: Իսկ ահա Լատվիայի «Վենտսպիլսն» ու Մոլդովայի «Շերիֆը», չնայած անհաջողության էին մատնվել չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլում, սակայն մրցակարգի համաձայն իրավունք ստացան պայքարը շարունակել Եվրոպայի լիգայում: Նույնպիսի պայմաններով Եվրոպայի լիգայում է հայտնվել նաեւ ռումինական «Տիմիշոարան», որտեղ խաղում են Քարամյան եղբայրները:



Որակավորման 4-րդ փուլի հանդիպումներից հայ ֆուտբոլասերների ուշադրության կենտրոնում Դոնեցկի «Մետալուրգի» արտագնա խաղն էր ավստրիական «Աուստրիայի» հետ: Դոնեցկում խաղն ավարտվել էր ոչ-ոքի (2-2), ուստի պատասխան խաղում Հենրիխ Մխիթարյանն իր թիմակիցների հետ պետք է ձգտեր հաղթանակ տոնել: Հանդիպումը չափազանց համառ ու դրամատիկ պայքարում անցավ: Առաջին խաղակեսում մրցակիցները մեկական գոլ փոխանակեցին: Ընդմիջումից քիչ հետո արդյունավետ խաղով աչքի ընկավ Հենրիխ Մխիթարյանը՝ եվրոգավաթներում խփելով իր 4-րդ գնդակը «Մետալուրգի» կազմում: Սակայն այդ գոլը հաղթական չդարձավ: 69-րդ րոպեին դաշտի տերերը 11 մ-անոց հարվածով վերականգնեցին հավասարակշռությունը: 3 րոպե անց խաղադաշտ մտավ Արարատ Առաքելյանը: Խաղի հիմնական ժամանակն ավարտվեց 2-2 հաշվով, ինչպես եւ Դոնեցկում էր: Նշանակվեց լրացուցիչ 30 րոպե: Դրա ավարտից 5 րոպե առաջ դաշտի տերերը տուգանային հարվածով կորզեցին հաղթանակը (3-2) եւ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին: Այսպիսով, «Մետալուրգն» ավարտեց իր ելույթները Եվրոպայի լիգայի խաղարկությունում:

Գլխավոր անակնկալը ռուսաստանյան ակումբների անհաջողությունն էր: Նրանցից եւ ոչ մեկին չհաջողվեց մտնել խմբային մրցաշար: «Զենիթը», որ առաջին խաղում հյուրընկալվելիս 3-4 հաշվով զիջել էր պորտուգալական «Նասյոնալին», պատասխան հանդիպման ժամանակ ուղեգիրը ձեռքից բաց թողեց խաղավարտից մեկ րոպե առաջ: 34-րդ րոպեին Ֆաթիհ Թեքեի խփած միակ գոլի շնորհիվ «Զենիթը» հաղթում էր, եւ դա բավական էր ընդհանուր հաջողության համար: Սակայն 89-րդ րոպեին Ռուբեն Միքայելի խփած գոլը «Զենիթին» զրկեց ուղեգրից:

Թվում էր, թե Սոֆիայում գրանցված ոչ-ոքի արդյունքը (0-0) Մոսկվայի «Դինամոյին» հաջորդ փուլ դուրս գալու լավ հնարավորություն էր ընձեռել: Սակայն Մոսկվայում դինամոյականները ԲԿՄԱ-ին զիջեցին 1-2 հաշվով: «Ամկարը» թեեւ սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց «Ֆուլհեմին», սակայն առաջին խաղում պարտվել էր ավելի մեծ հաշվով (1-3):

Հաջող խաղաց բելառուսական ԲԱՏԷ-ն՝ համոզիչ ռեւանշի հասնելով բուլղարական «Լիտեքսից» առաջին խաղում կրած պարտության (0-1) դիմաց: Միայն խաղավարտից 4 րոպե առաջ բելառուսները բացեցին հաշիվը: Իսկ ահա լրացուցիչ ժամանակում դաշտի տերերը եւս 3 գոլ խփեցին եւ ուղեգիր նվաճեցին: 77-րդ րոպեից հանդիպմանը մասնակցեց Հովհաննես Գոհարյանը:

Հոլանդական «Բրեդան», որ որակավորման 2-րդ փուլում 6-0 հաշվով հաղթել էր «Գանձասարին», ջախջախիչ պարտություն կրեց «Վիլյառեալից» (1-6): Պայքարից դուրս մնացին ադրբեջանական երկու ակումբները: «Ղարաբաղը» թեեւ սեփական հարկի տակ ոչ-ոքի (0-0) խաղաց հոլանդական «Տվենտեի» հետ, սակայն առաջինում պարտվել էր 1-3 հաշվով: «Բաքուն» 2-րդ խաղում էլ զիջեց «Բազելին» (1-5): Ղազախստանի «Ակտոբեն» էլ սեփական հարկի տակ զիջեց «Վերդերին» (0-2), որին հյուրընկալվելիս պարտվել էր խոշոր հաշվով (3-6): Խարկովի «Մետալիստը» պարտվեց ավստրիական «Շտուրմին» (0-1): «Վորսկլան» թեեւ «Բենֆիկային» հաղթեց սեփական հարկի տակ (2-1), սակայն դուրս մնաց հետագա պայքարից, քանի որ հյուրընկալվելիս զիջել էր խոշոր հաշվով (0-4): Էստոնական «Լեւադիան» սեփական հարկի տակ ոչ-ոքի խաղաց «Ղալաթասարայի» հետ, որին պարտվել էր 0-5 հաշվով: Խմբային մրցաշարում հանդես գալու իրավունք ստացավ «Փյունիկի» նախին մրցակից Զագրեբի «Դինամոն», որը երկու խաղերի ընդհանուր արդյունքով առավելության հասավ շոտլանդական «Հարթսի» նկատմամբ (4-0, 0-2):

ՇԱԽՄԱՏ

# Վարուժան Հակոբյանը սկսեց ոչ-ոքիով

Մոնրեալում մեկնարկեց շախմատի ավանդական 10-րդ մրցաշարը, որի 12 մասնակիցների թվում է ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը: Հայ շախմատիստը մրցաշարի անդրանիկ տուրում հաշտություն կնքեց կանադացի Թոմաս Ռուսել-Ռուզմոնի հետ: Ոչ-ոքի արդյունք գրանցվեց նաեւ Էթիեն Բաքրոյի եւ Սեբաստիան Մազի մրցավեճում: Կովալյովը հաղթեց Տիվյակովին, Օնիշչուկը՝ Բիասին, Նայդիչն առավելության հասավ Շուլմանի նկատմամբ, իսկ Բլյուվշտեյնը պարտության մատնեց Մոիսեենկոյին: 2-րդ տուրում Հակոբյանը կմրցի Բիասի հետ:

# Երկուսով ընդամենը կես միավոր

Հունաստանի Կալամարիա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Դավիթ Ջաքարյանը ոչ-ոքի խաղաց Անդրեյ Գուտովի հետ, իսկ Աղասի Ինանցը պարտվեց Աթանասիոս Մաստրովասիլիսին:

6 միավորով առաջատարի դերը պահպանեց հնդիկ գրոսմայստեր Արուն Պրասադը, որը ոչ-ոքի ավարտեց պարտիան ռումինացի Ալին Բերեսկուի հետ: Վերջինիս հետ 5,5-ական միավոր ունեն նաեւ Մարկոս Լիանեզան եւ Լեւան Արոշիձեն: Վերջինս հաղթեց գերմանացի Ստեֆան Բրոմբերգերին, Լիանեզան էլ պարտության մատնեց Վլադիսլավ Նեւեդնիչնուն: Դավիթ Ջաքարյանը 4,5 միավորով 21-րդ տեղում է: 4 միավորով 23-րդ հորիզոնականում է հանգրվանել Աղասի Ինանցը:

# Թիվ 1 մարզադպրոցը թիմային անվանակարգում ճանաչվեց լավագույնը

Բոլորովին վերջերս Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքում գտնվող թիվ 1 մարզադպրոցի սաները բավականին լուրջ հաջողություններով վերադարձել էին Մարիուպոլի հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնությունից՝ դառնալով մրցանակակիրներ: «Կարծում եմ, մեր մարզիկները շատ լավ մասնակցեցին այս մրցաշարին, իսկ որ ամենակարեւորն է, բոլորն էլ վերադարձան մեդալներով: Պարզապես վատն այն էր, որ մրցաշարի ժամանակ մեր մարզիկներից մեկի թեւը



ջարդվեց, թեպետ նա արդեն իսկ հասցրել էր մեկ անգամ հաղթանակ տանել, իսկ ինչ վերաբերում է մյուս մասնակիցներին, ապա նրանց հաջողվեց թիմային անվանակարգում ճանաչվել լավագույնը: Ճիշտ է, այս հանդիպմանը մասնակցում էին 15-ից ավելի քաղաքներ, բայց շնորհիվ մեր մարզադպրոցի սաների, ի ուրախություն բոլորիս մեր երկիրը պատվով դուրս եկավ այս խաղից», մեզ հետ զրույցում նշեց թիվ 1 մարզադպրոցի տնօրեն, սպորտի վարպետ Տիգրան Մարգարյանը:

Մարզադպրոցի տնօրենը մեծ ոգեւորությամբ նշեց, որ տեղի հայ համայնքն այնպիսի ջերմությամբ էր ընդունել ու դիմավորել մեր մարզիկներին, որ նրանց մի պահ թվացել էր, թե Հայաստանում են գտնվում: «Նրանք միշտ մեր կողքին էին, իսկ մրցումների ժամանակ մեր սաներին մեծ ոգեւորություն էին ներշնչում ու ամեն կերպ քաջալերում էին, որ ամեն ինչ շատ լավ է լինելու: Օգտվելով առիթից, ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել Մարիուպոլի հայ համայնքին եւ ասել, որ իսկապես նրանց ներկայությունն ու հոգեկան աջակցությունը մեզ համար շատ կարեւոր ու դրական նախապայման էր»:

Կլինե՞ն արդյոք նոր մրցաշարեր, եւ ինչ նոր ծրագրեր կան առաջիկայում հարցին ի պատասխան, Տ. Մարգարյանն ասաց, որ անշուշտ հրավերներ կան, բայց թիվ մեկ մարզադպրոցի սաները մեծ պատասխանատվությամբ ու աչալրջությամբ պատրաստվում են մասնակցել փետրվար ամսին Կիեւում կայանալիք հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնությանը:

Ըստ Տ. Մարգարյանի, հատկապես այս վերջին երեք տարիներին թիվ 1 մարզադպրոցը նոր թափ ու շունչ է ստացել ԲՀԿ-ական պատգամավոր Աշոտ Տոնոյանի «Աշոտ Տոնոյան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ ու հովանավորությամբ. «Այսօր շնորհիվ մեր պատգամավորի, մեր դպրոցը ոչ մի բանի կարիք չունի. տեխնիկապես լավ զինված ենք, մարզադպրոցի սաներին այսօր մարզում են լավագույն մարզիչները, իսկ դպրոցն էլ իր բոլոր հնարավորություններով ու հարմարություններով համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին: Այնպես որ, մեր սաների ծնողները նույնպես շատ շնորհակալ են պրն. Տոնոյանին իրենց երեխաների դաստիարակության հարցում ունեցած մեծ ավանդի եւ ներդրման համար»: Ամենավերջում զրուցակիցս խոստովանեց, որ երեխաների հետ իրենք էլ են «ջահելանում», կրկին անգամ նկատելով. «Սպորտը մեզ համար կյանք է, իսկ այսօր ամենագլխավորը նաեւ այն է, որ կարողանում ենք շատ ու շատ երեխաների փողոցից կտրել ու դաստիարակել իսկական մարզիկին վայել հոգեբանությամբ, որպեսզի հետագայում մեր մարզիկները ֆիզիկական պատրաստվածության առումով եւ բարոյահոգեբանական տեսանկյունից լիովին պիտանի լինեն մեր հայոց բանակին ու կարողանան պաշտպանել մեր հայրենի սահմանները»...

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Մեսին լավագույնն է

**«Բարսելոնի» արգենտինացի ֆուտբոլիստ Լիոնել Մեսին ՈւԵՖԱ-ի կողմից ճանաչվել է նախորդ եվրոմրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ եւ լավագույն հարձակվող: Մրցանակները նրան են հանձնվել Մոնակոյում կայացած արարողության ժամանակ:**



Մեսին մեծ ներդրում ունեցավ չեմպիոնների լիգայի մրցաշարում «Բարսելոնի» հաջողության մեջ: Նա 9 գնդակով ճանաչվեց չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկու: Այդ գոլերից ամենակարեւորը նա խփեց եզրափակիչում՝ «Մանչեսթր Յունայթեդի» դարպասը: Հաղթելով 2-0 հաշվով, «Բարսելոնը» նվաճեց չեմպիոնների գավաթը: Իսկ անցած մրցաշրջանի պաշտոնական հանդիպումներում Մեսին թիմի կազմում 38 գոլ խփեց:

Մեսին դարձավ արգենտինացի 2-րդ ֆուտբոլիստը, որ լավագույնը ճանաչվեց եվրոգավաթներում: Առաջինը «Ռեալում» հանդես եկած Ֆեռնանդո Ռեդոնդոն էր, որը լավագույնն էր ճանաչվել 2000-ին: ՈւԵՖԱ-ի այս մրցանակաբաշխությունն անցկացվում է 1998-ից, որում առաջինը մրցանակի արժանացավ «Ինտերի» բրազիլացի ֆուտբոլիստ Ռոնալդոն: Հաջորդ տարի լավագույնը Դեւիդ Բեքհեմն էր՝ «Մանչեսթր Յունայթեդից»: Հաջորդ տարիներին մրցանակին արժանացան Շտեֆան Էֆենբերգը («Բավարիա»), Զինեդին Զիդանը («Ռեալ»), Ջանլուիջի Բուֆոնը («Յուվենտուս»), Դեկուն («Պորտո»), Սթիվեն Ջերարդը («Լիվերպուլ), Ռոնալդինյոն («Բարսելոն»), Կական («Միլան») եւ Քրիստիանու Ռոնալդուն («Մանչեսթր Յունայթեդ»):

Մոնակոյում մրցանակներ հանձնվեցին նաեւ առանձին օղակներում լավագույնը ճանաչված ֆուտբոլիստներին: Լավագույն դարպասապահի մրցանակը հանձնվեց «Մանչեսթր Յունայթեդի» դարպասի պահապան Էդվին վան դեր Սարին: Նա առաջին անգամ նման պատվի արժանացավ: Ռեկորդակիրը Մյունխենի «Բավարիայի» նախկին դարպասապահ Օլիվեր Կանն է, որը 4 անգամ (1999-2002) ճանաչվել է լավագույնը: Գործող դարպասապահներից լավագույն արդյունքն ունի Պետեր Չեխը, որը 3 անգամ է դարձել դափնեկիր (2005, 2007, 2008):

«Չելսիի» ավագ Ջոն Թերին 3-րդ անգամ ճանաչվեց լավագույն պաշտպան՝ դառնալով յուրօրինակ ռեկորդակիր: Նա մրցանակի էր արժանացել նաեւ անցյալ տարի, իսկ առաջին պարգեւը ստացել էր դեռեւս 2005-ին: Հատկանշական է, որ Թերիին մրցանակը հանձնեց լեգենդար Պաոլո Մալդինին, որը նմանատիպ պատվի էր արժանացել 2007-ին:

Լավագույն կիսապաշտպանի մրցանակին արժանացավ «Բարսելոնի» խաղացող Խավի Էռնանդեսը: Նա առաջին անգամ է դափնեկիր դառնում: Ինչպես վերը նշեցինք, լավագույն հարձակվող է ճանաչվել Մեսին: Հարձակվողների մեջ յուրօրինակ ռեկորդակիրը «Ռեալի» ավագ Ռաուլն է, որը երեք տարի անընդմեջ (2000-2002) լավագույնն է ճանաչվել:

AZG NEW 8.QXD 8/28/2009 10:00 PM Page 1



# Սփյուռքի նախարարությունը գումարեց եռամսյակի վերջին ատյանի նիստը

Երեկ գումարվեց սփյուռքի նախարարությանը կից ատյանի նիստը, որի ընթացքում քննարկվեցին հայրենիք-սփյուռք գործակցության ոլորտում գործադիր մարմինների 2009-ի իրականացրած աշխատանքները, որոնք ներկայացրեց նախարարության աշխատակազմի ղեկավար **Արտակ Զաքարյանը**: Նա նշեց, որ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հանձնարարությամբ բոլոր պետական գերատեսչությունները ներկայացրել են համապատասխան տեղեկանքներ եւ հաղորդագրություններ 2009-ի առաջին կիսամյակում Հայաստան-սփյուռք գործակցության ոլորտում իրենց կողմից իրականացվող կամ շարունակության մեջ գտնվող միջոցառումների վերաբերյալ:

Հայաստան-սփյուռք գործակցության ոլորտում մշակվել եւ որպես փաստաթուղթ ընդունվել են տարբեր իրավական ակտեր, կառավարության որոշումներ, օրենքի, նախագծերի փոփոխություններ եւ այլն: Պրն Զաքարյանը նշեց նաեւ, որ Հայաստանի եւ արտերկրների միջեւ կնքվել են 13 գործակցության հուշագիր-համաձայնագրեր տարբեր միջոցառումներ իրականացնելու մասին: Համատեղ գործառություններն ու կատարած աշխատանքները նշելուց հետո պրն Զաքարյանը ներկայացրեց նաեւ առաջիկա մշակված ծրագրերը:

Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** նշեց, թե առաջին անգամն է, որ բոլոր նախարարությունների գործակալությունների կողմից իրականացվող ծրագրերը պետք է համակարգվեն սփյուռքի նախարարությունում եւ հարկ է, որ այդ մասին նախապես յուրաքանչյուր ծրագիր մանրամասն քննարկվի համատեղ:

Քննարկումները շարունակվեցին 2010-ի բյուջեի շուրջը, եւ հաշվի առնելով տնտեսական ճգնաժամը, առաջարկվեց բյուջեում ներառել ամենահրատապ ու ազգապահպանման համար կարեւորագույն ծրագրերը:

Քննարկվեցին համահայկական մասնագիտական համաժողովներ անցկացնելու առաջարկները, եղան բազմաթիվ այլ առաջարկներ, որոնց նախարարը տվեց սպառիչ պատասխան ու հանձնարարեց երկու շաբաթ հետո բոլոր առաջարկներն ընդգրկված ներկայացնել, որպեսզի վերջնական համաձայնությունից հետո դրանք ներառվեն 2010 թ. բյուջեի նախագծում եւ ներկայացվի կառավարություն:

Ատյանի քննարկմանը ներկայացվեց սփյուռքի նախարարության 2009-ի հրատարակությունների մասին տեղեկատվությունը, ծավալվեց աշխույժ քննարկում: Բացի վերը նշված օրակարգային հարցերից, ատյանում քննարկվեցին ընթացիկ հարցեր, հնչեցին առաջարկներ ու նոր ծրագրերի գաղափարներ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Դպրոցի տնօրեններին նշանակելու նոր կարգ

**«Օրենքը բավականին քննարկվել, վերծանվել, փոփոխվել է: Կառավարության ներկայացրած օրենքի նախագծի տարբերակի ու այն օրենքի միջեւ, որը հուլիսի 10-ին ընդունվեց ու օգոստոսի 15-ից արդեն պաշտոնական տեղեկագրում տպագրվեց, սկզբունքային լուրջ փոփոխություններ կան», երեկ «Հայացք» ակումբում՝ խոսելով ԱԺ-ի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» օրենքից, նշեց «Ժառանգություն» խմբակցության անդամ Անահիտ Բախչյանը:**

**Նրա խոսքերով՝ կրթության ոլորտի այսօրվա փոփոխություններից ու կրթության մակարդակից է կախված, թե ովքեր կլինեն հանրապետության վաղվա քաղաքական գործիչները, նախագահը, վարչապետն ու նախարարները: Փոփոխությունների կարեւորագույն սկզբունքն, ըստ Անահիտ Բախչյանի, ուսումնական հաստատությունների կառավարման, ժողովրդավարացման սկզբունքն է: Ըստ Բախչյանի՝ դեռ 1999 թ. կրթության բարեփոխումների նպատակով առաջին վարկային ծրագրով ներդրվել է դպրոցները խորհուրդներով կառավարելու ծրագիրը, «սակայն այդ կառավարման խորհուրդներն ընդամենը ծառայեցին իշխանահաճո տնօրեն ընտրելու նպատակին»:**

**Նրա հավաստմամբ՝ նախորդ օրենքը թույլ էր տալիս, որ դպրոցների տնօրենների ընտրությամբ զբաղվեն մարզպետները: Անահիտ Բախչյանը հավաստիացրեց, որ նոր օրենքով ամրագրված է, որ կրթության կառավարման խորհուրդը 5 տարի ժամկետով սահմանված կարգով ընտրում է տնօրեն ու հիմնարկի անունից նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր: Այդ խորհրդի մեջ են ներգրավվում ծնողները, մանկավարժները, մարզպետարանի ներկայացուցիչները: Նոր օրենքով սահմանվում է նաեւ, որ դպրոցի տնօրենի թեկնածուն պետք է կրթության կառավարման հավաստագիր կարողանա ձեռք բերել, իսկ դա կլինի միայն այն դեպքում, եթե տնօրենի թեկնածուն դիմի հատուկ հանձնաժողովի, որտեղ որոշակի քննության ընթացակարգով անցնելուց հետ միայն կստանա կամ չի ստանա հավաստագիր:**

**«Ինքնուրույնության աստիճանը գտնվում է զրոյական մակարդակի վրա, դպրոցի տնօրենները խամաճիկներ են դառնում մարզպետների ձեռքին՝ հատկապես ընտրությունների ընթացքում», ընդգծեց պատգամավորը: Բախչյանի խոսքերով՝ գործող իշխանությունը 100%-ով քվեարկել է օրենքում սկզբունքների ամրագրման օգտին, այդ իսկ պատճառով պետք է պատասխանատվություն կրի, «իսկ օրենքը պետք է լակմուսի թուղթ դառնա»:**

**Ն. Մ.**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

# Շաբաթական ամփոփ տվյալներ

Օգոստոսի 24-28-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 49,134,975 ԱՄՆ դոլար՝ 374.82 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 56,302,217 ԱՄՆ դոլար՝ 376.58 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 1,000,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 375.90 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Օգոստոսի 17-23-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 9.4 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 15.5 մլն ԱՄՆ դոլար:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը եւ կազմը**

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով ներկայացնում է

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի եւ կազմի վերաբերյալ 2009 թվականի 2-րդ եռամսյակ
(ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

**Եռամսյակի սկիզբ**

| | ՀՓԻ | ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,343,317,935.78 |
| այդ թվում՝ | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,343,317,308.38 |
| որից՝ | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 7,997,996.00 | 11,957,599.66 |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 | 0.00 |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 925,856,488.94 |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 925,855,861.54 |
| **Եռամսյակի վերջ** | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,963,073,631.15 |
| այդ թվում՝ | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,963,073,016.09 |
| որից՝ | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 768,474.00 | 1,192,845.48 |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 | 0.00 |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,514,526,610.32 |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,514,525,995.25 |

www. azg.am

**ՀՀ ԿԲ հաշվապահական հաշվեկշիռ**
**2009թ. հունիսի 30-ի դրությամբ**

| Հազար ՀՀ դրամ | 30 հունիս 2009թ. | 31 մարտ 2009թ. | 2008թ. |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Ակտիվներ արտարժույթով | | | |
| Դրամական միջոցներ | 74,681,363 | 77,675,830 | 15,441,978 |
| Բանկերում եւ այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 268,937,071 | 370,106,747 | 77,238,100 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 362,431,751 | 41,944,921 | 340,237,664 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 917 | 917 | 917 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 51,847,796 | 54,983,252 | 44,362,474 |
| Այլ ակտիվներ | 365,440 | 380,321 | 78,001 |
| | 758,264,338 | 545,091,988 | 477,359,134 |
| Ակտիվներ տեղական արժույթով | | | |
| Վարկեր եւ հակադարձ հետգնման պայմանագրեր | 58,089,989 | 76,545,570 | 80,955,087 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 119,178,805 | 97,217,646 | 97,050,294 |
| Հիմնական միջոցներ | 11,531,764 | 10,616,562 | 10,378,716 |
| Ոչ նյութական ակտիվներ | 366,104 | 362,405 | 255,827 |
| Այլ ակտիվներ | 7,940,518 | 7,368,399 | 1,323,943 |
| | 197,107,180 | 192,110,582 | 189,963,867 |
| Ընդամենը ակտիվներ | 955,371,518 | 737,202,570 | 667,323,001 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Պարտավորություններ արտարժույթով | | | |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 125,341,868 | 144,672,441 | 69,788,059 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 58,665,614 | 1,154,563 | 1,030,950 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 45,152,005 | 48,243,049 | 41,337,306 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 867 | 111,745 | - |
| Այլ փոխառություններ | 25,968,007 | 15,871,175 | 12,440,435 |
| Այլ պարտավորություններ | 151,065 | 145,970 | 121,614 |
| | 255,279,426 | 210,198,943 | 124,718,364 |
| Պարտավորություններ տեղական արժույթով | | | |
| Թղթադրամներ եւ մետաղադրամներ շրջանառության մեջ | 258,926,322 | 234,084,828 | 344,503,231 |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 44,790,050 | 47,372,623 | 40,333,711 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 225,938,200 | 67,741,810 | 103,962,779 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 140,241,700 | 139,416,534 | 43,467,351 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 1,437,498 |
| Այլ պարտավորություններ | 855,252 | 725,269 | 1,244,457 |
| | 670,751,524 | 489,341,064 | 534,949,027 |
| Ընդամենը պարտավորություններ | 926,030,950 | 699,540,007 | 659,667,391 |
| | | | |
| Հազար ՀՀ դրամ | **30 հունիս 2009թ.** | **31 մարտ 2009թ.** | **2008թ.** |
| Սեփական կապիտալ | | | |
| Թողարկված կապիտալ | 100,000 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 9,870,486 | 9,870,486 | 9,870,486 |
| Լրացուցիչ կանոնադրական կապիտալ | 85,663,194 | 85,663,194 | 85,663,194 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | (1,322,049) | 150,273 | (163,455) |
| Կուտակված վնաս | (64,971,063) | (58,121,389) | (87,814,615) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 29,340,568 | 37,662,563 | 7,655,610 |
| Ընդամենը պարտավորություններ եւ սեփական կապիտալ | 955,371,518 | 737,202,570 | 667,323,001 |

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.08.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: